



ԵՏՀՐԱՏԻ

Գ Ի Տ Ա Կ Ա
Տ Ե Խ Ն Ո Լ Ո Գ Ի Ա
Գ Բ Ա Դ Ա Բ Ա

Հ. ՈՍՏ
H. OST


Ք Ի Մ Ի Ա Կ Ա Ն
Տ Ե Խ Ն Ո Լ Ո Գ Ի Ա

Պ Ա Տ Թ Ո Ւ Տ Ի Կ Ն Տ Ո Ւ Թ Ե Դ

1935

№ 24—26

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ը Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Յ Ե Բ Ե Կ Ա Ն



ՊԵՏԼՐԱՏԻԳԻՏԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 22-26

№ 22-26

Հ. ՈՍՏ
Ի. ՕՏ

Ք Ի Մ Ի Ա Կ Ա Ն Տ Ե Խ Ն Ո Լ Ո Գ Ի Ա

Պ Ա Յ Թ Ո Ւ Ց Ի Կ Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

14378

A $\frac{160r2}{240r}$

A



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ր Ե Վ Ա Ն 1935

Պատ. խմբագիր՝ Ն. Խանջյան
Քարգմանիչ՝ Թ. Դրամբյան, Պալատան
Ազգի խմբագիր՝ Հ. Պետրոսյան
Տեխ. խմբագիր՝ Գ. Ջենյան
Մրբագրիչ՝ Մ. Գեվորգյան

Գլխավոր Ն. 8445 (ը), հրատ. № 2876 պատվեր ը № 280, արժամ 2000
Հանձնված և արտադրված է փետրվարի 1984 թ.
Մատրագրված է ապրիլի 26 հունվարի 1985 թ.

Պետհրատի ապարան — Յերեվան

ՊԱՅՅՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐ

Պայթեցման և հրաձգութիան համար գործածվող պայթուցիկ նյութերը կոչվում են այն քիմիական միացութիւնները կամ խառնուրդները, վորոնք փոքրիկ իմպուլսների (հարված, տաքացում) ազդեցութիւն տակ անակնկալ կերպով փոխվում են այլ նյութերի, միաժամանակ կազմելով դազեր և արտադրելով ջերմութիւն: Գլորային ազոտը՝ NCl_3 , շփումից անգամ տարրալուծվում է բաղադրիչ ելիմենտների, ըստ վորում 1 կգ արտադրում է մոտ 320 կալ., նիտրոգլիցերինը պայթում է հարվածից և տարրալուծվում CO_2 , H_2O և N -ի, առաջացնելով յուրաքանչյուր կգ-ին. 1450 կալորիա:

Բոլոր պայթուցիկ նյութերն ենդոտերմիկ են՝ նրանց միջիատումների խմբակցութիւնները գտնվում են անկայուն հավասարակշռութիւն մեջ, ինչպես այդ լինում է սուր ծայրի վրա գտնվող գնդի հավասարակշռութիւն դեպքում: Նրանք ձգտում են, ջերմութիւն արտադրելով, անցնել ավելի կայուն միացութիւնների, սակայն միշտ ել անպայման չի առաջանում այնպիսի մի սիստեմ, վորը կազմվում է առավելագույն ջերմութիւն արտադրելով: Գնդի անկման անալոգիայով, փոփոխութիւն ամ-մանը դուզընթաց, արագորին տաճում է և սիստեմը փոփոխող ուժը. բարեխառնութիւն բարձրացումը կարող է պրոցեսը հասցնել պայթման կետին:


Ճնշման տակ գտնվող հեղուկ ածխածնութիւն և ջրային գոլորշին չեն պատկանում պայթուցիկ նյութերի շարքին: Նրանք ունեն վոչ թե քիմիական, այլ մեխանիկական եներգիայի պաշար՝ քիմիապես չտարրալուծվելով, գոլորշիացման ժամանակ նրանք առաջացնում են ցրտացում: Թերմիտն ևս չի պատկանում պայթուցիկ նյութերի կատեգորիային, վորովհետև՝ արտադրելով ահագին քանակութիւն ջերմութիւն, նա գազեր չի կազմում:

Վոչ բոլոր ենդոտերմիկ միացութիւններն են պայթուցիկ:

այսպես, որինակ, ծծմբածխածինը՝ CS_2 և ազոտ սուլբուրդը՝ N_2O պայթուցիկ չեն:

Պայթուցիկ նյութերը կարող են լինել կարծր (շառաչող բաժրակ), հեղուկ (նիտրոգլիցերին) և գազային (շառաչող գազ), միասեռ կամ խառնուրդներ (ծծմբային վառող): Դրանց ներկայացուցիչն է նիտրոգլիցերինը՝ $C_3H_5(ONO_2)_3$, վորի մեջ ազոտի հետ անկալուն միացած թթվածինը պայթման ժամանակ միանում է ածխածնի և ջրածնի հետ:


Պայթման տերմային եֆեկտը հաշվելու համար պրոցեսը պատկերացնում են լեղկու փուլերով:



Գումարն է $+329$ կալ.


Այդպիսով, 1 մոլ. նիտրոգլիցերինը, 227 գր, առաջ է 329 կալ. կամ 1 կգ = 1460 կալ. մթնոլորտի անփոփոխ ճնշման դեպքում. հեղուկ ջրի ջերմային եֆեկտը կազմում է 1570 կալ. (փակ տարածության մեջ անփոփոխ ծավալի դեպքում, քիչ ավելի մեծութունն է ստացվում):

Պայթման ջերմութունը պայմանավորվում է մեծ մասամբ ինչպես և նիտրոգլիցերինի դեպքում, թթվացման պրոցեսներով որինակ, այդ տեղի լի ունենում և սովորական վառողի պայթման ժամանակ, վորը ներկայացնում է վառող նյութերի (C, S և սալպետրի մի խառնուրդ: Այսպես, ածխի և սալպետրի խառնուրդի պայթյունն ընթանում է հետևյալ հավասարությանը.



Այբման գերակշռող ջերմության շնորհիվ, ամբողջ պրոցեսը հանդիսանում է եկզոտերմիկ:

Ն'լ ավելի ջերմութուն են արտադրում այն խառնուրդները, վորոնք պարունակում են քլորաթթվի աղերը, վորովհետև նրանք, քայքայվելով քլորային աղի և թթվածնի, արդեն ինքնըստինքյան արտադրում են ջերմութուն, իսկ կալիում սուլֆատի և ածխի կամ ծծմբի խառնուրդը չի պայթում, չնայած վոր K_2SO_4 գրեթե նույնքան թթվածին է պարունակում (37%), վորքան է $KClO_3$ (39%), վորովհետև ռեակցիան՝



ընթանում է ջերմութուն կլանելով:

Պայթուցիկ նյութերի թագնված շերտությունը, նրանց պոտենցիալ եներգիան, կամ «պոտենցիալը», արտահայտվում է նախ և առաջ շերտության ձևով. այն ինչ պայթման շերտությունը ներկայացնում է մեխանիկական աշխատանքի այն չափը, վորը կարող են կատարել պայթուցիկ նյութերը: Կալորիաները շերտության մեխանիկական եկվիվալենտի—425—վրա բազմապատկելով, մենք ստանում ենք կլիոզբամմետրների վերածած մեխանիկական աշխատանքը.

	կալ.	կգ/մ
1 կգ պայթուցիկ ժելատին (93%)	1520	650.000
1 » նիարոզլիցերին	1450	620.000
1 » նիարոզլիցերինային վառող	1100	470.000
1 » կիզելգուր-դինամիտ	1099	460.000
1 » պիրոկսիլին (13,4%N)	1050	450.000
1 » պիրոկսիլինային վառող	800—950	370.000
1 » պիկրինաթթու	800	340.000
1 » տրինիտրոտոլուոլ	720	310.000
1 » սոլորական վառող	650—700	300.000
1 » շառաշող սնդիկ .	420	180.000

Պայթուցիկ նյութերի քայքայման դեպքում արտադրված եներգիան, ընդհանուր առմամբ, շատ չե և անհամեմատ ավելի քիչ է, քան ածխի և նավթի այրման ընթացքում արտադրված շերտությունը: Տեխնիկայում կարևորը վոչ այնքան այդ եներգիայի մեծությունն է, վորքան պայթման ընթացքում նրա աշխատվելու անակնկալությունը:

Պայթուցիկ նյութերը արոհվում են լերեք դասի.

1. Իսկական պայթուցիկ նյութեր,
2. հրաձգային վառողներ,
3. վառիչ բաղադրություններ:

Վորպես «իսկական պայթուցիկ» նյութեր ընդհանրապես ավելի պետքական են այն նյութերը, վորոնք պայթում են հնարավոր չափով կարճ ժամանակամիջոցում, այն է՝ «բրիզանտորեն»: Վորքան շուտ է ազատվում շերտությունը և շուտ են արտադրվում գազերը, այնքան բարձր է լինում գազերի ճնշումը, հետևապես այնքան լրիվ է ոգտագործվում պայթման եներգիան: Դանդաղ պայթման դեպքում, գազերի զգալի մասն աշխատվում

ե անոգուտ կերպով լեռնալին տեսակի ճեղքերից և այն անցքից, վորի մեջ դրված է լինում վառիչ ժապավենը. և վորովնտե բրիզանտ (փշրտող) պայթուցիկ նյութերն եներգրայի մեծ պաշար են պարունակում, ուստի այդ հնարավորութունն է տալիս դայլիկոնած ավելի քիչ անցքերով աշխատելու: Ածխահանքերի փափուկ քարտեսակները պայթեցնելիս, ավելի պիտանի են դանդաղ պայթեցվող նյութերը, վորոնք խոշոր կտորներ են պուկում և ավելի քիչ են մանրացնում, քան բրիզանտները: Բրիզանտ նաև և ուժերը, վորոնք պիտի ցիր ու ցան լինեն մանր կտորներով, լցնում են բրիզանտորեն ներգործող պիկրոնաթթվով:

Այլ հրազենների համար գործածվող հրաձգային նյութերն իրենց հատկութուններով պետք է տարբերվեն պայթուցիկ նյութերից՝ սրանց պայթման ժամանակ չերևացող ճնշումը պետք է ազդի վոչ թե վայրկենապես, այլ այն ժամանակի ընթացքում, չերբ գնդակը կամ ուժը գտնվում է հրազենի փողի մեջ՝ Գազերի ճնշումը խիստ մեծ չպիտի լինի, և գազերի լրիվ արտադրվելը տեղի պիտի ունենա ուժը շարժվելուց հետո:

Բրիզանտ պայթուցիկ նյութերն անպայման անպետք են հրաձգութայն համար, վորովհետև նրանք պայթեցնում են հրանոթի փողը: վորքան ծանր է ուժը, վորքան մեծ է նրա իներցիան, այնքան ավելի դանդաղ պիտի այրվի վառողային լիցքը՝ այլուժը պիտի վերջանա վոչ ավելի շուտ, քան յերբ ուժը կթողնի հրանոթի անցքը:

«Վառիչ» բաղադրութունները, ինչպես, որինակ, շառաչող սնդիկը, վորոնք ծառայում են բուն «պայթուցիկ» նյութերը բոցավառելու համար, պետք է բավականաչափ դյուրավառութուն, զգայնութուն և մաքսիմալ «բրիզանտութուն» ունենան:

Նախկին սովորական սև վառողը պայթում է համեմատաբար դանդաղ, վոչ բրիզանտորեն. ընդհակառակը, բրիզանտ են նիտրոգլիցերինը, պիրոկսիլինը, պիկրինաթթուն, քլորաթթվի ազերի խառնուրդները և շառաչող սնդիկը: Պետք է, ի միջի այլոց, նկատել, վոր բրիզանտութունը յուրաքանչյուր պայթուցիկ նյութի համար խիստ վորոշ մեծութունն է. նա փոփոխվում է ֆիզիկական հատկութունների, ճնշման և նախնական վառիչ թելի ընուլթի փոփոխումից: Նիտրոգլիցերինը, պիրոկսիլինը և այլն, նույնիսկ շառաչող սնդիկը դանդաղորեն այրվում են բաց


ողում վառելիս. իսկ շառաչող սնդիկը բրիզանտորեն պայթում է հարվածից. ճիշտ այդպես է լինում և նիտրոգլիցերինը, լեբբ շառաչող սնդիկի պայթյունը ցնցում է նրան: Ժելատինացրած դրուժյամբ և՛ նիտրոգլիցերինը, և՛ պիրոկսիլինը կարող են դանդաղորեն պայթել, չեթե ազդում է նրանց վրա շառաչող սնդիկի վոչ այնքան ուժեղ բուժինը, ուստի և պիտանի լին հրածուկայան համար:

Պայթուցիկ նյութի աշխատանքի արտադրողությունը վորոշվում է պայթման մոմենտում առաջացող ճնշումով: Նիտրոգլիցերինի պոտենցիալը կազմում է 1450 կալ, իսկ պայթման ժամանակ գոյացող գազերի տեսակարար ծավալը՝ $V^0 = 713$ լ. այդ նշանակում է, վոր 1 կգ պայթելու ժամանակ արտադրում է 713 լ գազ (0° և 760 մմ դեպքում) և 1450 կալ. Չերմութուն Պայթման Չերմաստիճանը ճշտորեն վորոշել չի կարելի, վորովհետև անհայտ է գազերի Չերմունակութունը բարձր Չերմաստիճաններում: Նիտրոգլիցերինի դեպքում այդ Չերմաստիճանը կարելի է վորոշել մոտավորապես $3000^\circ - 3500^\circ$ C: Յեթե ընդունենք վերջին մեծութունը, այդ դեպքում 713 լ գազի ծավալը 3500° -ում կլինի՝ $713 \times (1 + 0,00367 \cdot 3500) = 9850$ լիտր, և վորովհետև այդ գազերը պայթման մոմենտում (իդեալական) ունենում են 1 լ ծավալ, ուստի և ճնշումը ընդունվում է 9850 մթն.:

Իրեն՝ պայթուցիկ նյութի բռնած տարածության ծավալը կոչվում է լիցի խտություն և նշանակվում Δ նշանով: Յեթե պայթուցիկ նյութի 1 կգ ունի 1 լ ծավալ, այդ դեպքում $\Delta = 1$, չեթե 10 լիտր է, $\Delta = 0,1$, վորովհետև նիտրոգլիցերինի տես. կշիռը հավասար է 1,6, ուստի նրա լիցի խտութունը $\Delta = 1,6$, և պայթման ժամանակ մաքսիմալ ճնշումը կլինի $1,6 \times 9850 = 15760$ մթն.: Պայթման ժամանակ գոյացող գազերի ճնշումն ընդհանրապես հաշվում են հետևյալ բանաձևով՝ $P = V^0 \times (1 + 0,00367t) \times \Delta$: Այդքան բարձր ճնշումների ժամանակ գազերը Բոյլ-Մարիոտի որենքին չեն լինթարկվում, վորովհետև իրենք հենց գազային մոլեկուլներն ընդունում են մի վորոշ ծավալ, վորը կոչվում է «կոմպլուս», և վորն այդպիսով կորչում է լիցքային տարածության համար: Այդ պատճառով լեբբ նիտրոգլիցերինի համար $\Delta = 1,4$, իսկ պիրոկսիլինի համար $\Delta = 1,2$, պայթեցուցիչ գազերի ճնշումը դառնում է անսահմար

մեծ: Նման հաշվումների մեջ մյուս անճշտութունների ազդու-
րը թագնված է բարձր ջերմաստիճաններում CO_2 և H_2O դիօ-
սոցիացիայի (տարբաբաժանման) մեջ, դրա համար ել նիտրոգլի-
ցերինի պայթման դեպքում, որինակ, իրականում արտադրվում
է վոչ թե 1450 կալ., այլ ավելի քիչ: Գազերի պայթման և ճընշ-
ման ջերմաստիճանի համար ճիշտ տվյալներ չեն կարող գտնվել:

Բոլոր նման հաշիվները վերաբերում են իդեալական
պայթման դեպքին: Իրականում յուրաքանչյուր պայթյուն տեղի
լի ունենում վոչ թե վայրկենապես, այլ մի վորոշ ժամանակի
ընթացքում: Ուստի և պայթման ուժը հանդիսանում է իր-
բև մի մեծություն, վորը կախում ունի մի քանի ֆակտորներից՝
պտտենցիալից, լիցի խտությունից և բրիզանտությունից: Այդ
պայթման ուժը պրակտիկալում վորոշվում է Տրաուզլի
սանդում (նկ. 1): Հաստ պատերով կապարե կազապարի
մեջ փորված է դրանաձև մի խոռոչ, վորի տրամագիծն է 125 մմ և
խորությունը՝ 25 մմ: Այդ անցքը լցվում է 10 գ. պայթուցիկ
նյութ (a) և 2 գ շառաչող սնդիկ՝ պատիճով (b); վորը կպցնում
են երկատրական հոսանքով. մնացած տարածությունն էլ լցնում
են ավազով (c): Պայթումից հետո խոռոչի սկզբնական ծավալը
(61 սմ³) մեծանում է: Այդ մեծացումը սովորական վառողի հա-
մար կազմում է մոտ 30 սմ³ (նկ. 1 B), պիրոկուսիլինային վա-



Նկ. 1.

ռուգի և շառաչող սնդիկի համար՝ 150 սմ³ (նկ. 1 C), տրինի-
տրոթուլուլի համար՝ 300 սմ³, պիրոկուսիլինի համար՝ 420 սմ³
(D) և նիտրոգլիցերինի համար՝ 600 սմ³ (E): Այդ թվերն այլ
հարաբերություն մեջ են գտնվում, քան պայթուցիկ նյութերի
պտտենցիալները, և չափազանց ցածր են գանդաղորեն ավրվող
վառողների համար: Անուամենայնիվ պրակտիկ նպատակներ

համար Տրաուցլի սանդուս փորձելն ունի համեմատական նշանակութիւնս:

Պայթուցիկ նյութի բրիզան տուֆլուսը վորոշվում է պայթման արագութիւնամբ: Այդ նպատակի համար պայթեցնում են, որինակ, 1,5 մ լերկարութիւնամբ փամփուշաբ, և մրով պատած պտտովող թմրուկի հետ միացրած կայծային քրոնոզարֆով վորոշում են պայթման հարատևութիւնը (թմրուկը պտտվում է 200 պտույտի արագութիւնամբ մի վայրկյանում): Պայթման արագութիւնը մեծապես կախված է պայթուցիկ նյութի խտացումից, և պայթուցիկ ժելատենի ու արինիտրոթիուուլի համար մաքսիմալ մեծութիւն է հանդիսանում 7000 մ մի վայրկյանում, հեղուկ նիտրոզլիցերինի համար՝ 1800 մ, սև վառուղի համար՝ 300 մ:

Հարվածի նկատմամբ դգայնութիւնը վորոշվում է խիտող մուրճի ոգնութիւնամբ:

Նրանից հետո, լերը չինացիներն ու արբանբրը 13-րդ դարի սկզբում, մեր թվականութիւնից հետո, հնարեցին առաջին սալպետրային ֆառնուրդները և սկսեցին գործադրել վորպես մարման չինթարկվող վառիչ խառնուրդներ, Յեվրոպայում մտաւ վորապես 1300 թվականից սկսեցին գործածել վառուղի հրաձգութիւն համար (Բերտոլդ Շվարցը Ֆրեյբուրգում): 17-րդ դարից սկսեցին գործածել այն նաև խաղաղ նպատակների—ճարտարապետական աշխատանքների համար, այլիական ճանապարհները կառուցելիս, հանքերում և քարհանքներում, իսկ 1867 թ. սկսած Նորբլան դինամիտները միանգամայն նոր ուղիներ բացին լերկաթգծերի և նավազնացութիւն համար: Արդէ պայթուցիկ նյութերի տեսակների խիստ առատութիւնը հրաձգութիւն համար գործածվող պայթուցիկ նյութերի տեխնիկայում այնպիսի լայն մասնագիտացում է առաջացրել, վորն անհնար էր հին սև վառուղի ժամանակ: Պայթուցիկ նյութերի մեծ մասը տեխնիկայպես առգործածելի լին—քլորային ազոտը, ացետիլենի արծաթային միացութիւնները, ոգոնիդները, քլորջրածնական թթվի լիթերները և այլն, նկատի ունենալով այն խոշոր վառուղի, վոր ներկայացնում է նրանց գործածութիւնը, պրակտիկայում անգործադրելի լին ճիշտ այնպես, ինչպես և մաքուր նիտրոզլիցերինը: Պայթեցման աշխատանքների ժամանակ հանքահորերում պայթումից գայացող գազերը թունավոր չլիտի լինեն (CO, NO₂): Շառաչող գազերը պայթեցման աշխատանքների համար պիտանի չեն, սակայն ալք գազերն ոգտագործում են դազային շարժիչներէ հա-

մար, և այդ հանգամանքը թույլ է տալիս հուսալու, վոր ապագայում նման աշխատանքների համար կհաջողվի գործածել և սովորական պայթուցիկ նյութերը (գինամիտային մոտորներ):

Պայթուցիկ նյութերի հարդարումը կատարվում է ինչպես մասնավոր, այնպես էլ պետական գործարաններում: Ամենախոշոր մասնավոր ընկերությունը Համբուրգի Նորելյան միջազգային գինամիտային արեստն է (հիմն. 1865 թ.), 57 միլ. մարկ ակցիոներական կապիտալով, վորը 13 գործարաններում պատրաստում է նիտրոգլիցերին պարունակող պայթուցիկ նյութեր և վառոդ: Քլոլն—Ռոտվելյի գերմանական միացյալ վառոդային գործարանները (Հոենոս—Վեստֆալյան, Ռոտվելյ—Համբուրգ, Կրամեր և Բուխհայց, Վոլֆ և ընկ.) 1905 թվին 32 գործարաններում պատրաստել են 5000 ս. զանազան տեսակի վառոդ: Պրուսական բազմական վառոդը պատրաստում է պետությունը Շպանդաուլում և Հաննաուլում. դրա համար անհրաժեշտ պիրոկսիլինը պատրաստվում է նույն տեղում:

1911 թ. Գերմանիայում ստացված է 50—60.000 ս զանազան պայթուցիկ նյութեր, վորոնց թվում՝ 11000 ս գինամիտ և 15.000 ս անվնաս վառոդներ. արտահանված է 7260 ս հրաձգային և պայթուցիկ նյութեր (20 միլիոն գերմ. մարկ գումարով) և 12700 ս վառոդ (50,6 միլ. գերմ. մարկ գումարով):

Պայթուցիկ նյութեր պատրաստելու և պահելու կանոնները վորոշված են 1884 թվի որենքով. թե մեկը և թե մյուսն արգելվում են այն անձանց, վորոնք դրանց համար հատուկ թույլտվություն չեն ստացել: Պայթուցիկ նյութերի գիտական և տեխնիկական ուսումնասիրությունների համար խոշոր ծախքերով կառուցված է կենտրոնական կալարան՝ Նեյլաբելաբերգում, վորն ունի վառոդի գործարան և պոլիգոն՝ հրաձգութայն համար:

Վերջին պատերազմի ընթացքում պայթուցիկ նյութերի պատրաստումը Գերմանիայում հասավ անհավատալի չափերի: Պատիճները համար շտապազուսնչիկ միայն ամսական արտադրվում էր մինչև 50 ս:

2 լիտրանոց սրվակի մեջ ածած 1,36 տես. կշիռ ունեցող 60 գ ազոտաթթվի մեջ փոքրիկ բաժիններով լուծում են 5 գ սնդիկ, ապա մեկ կամ լեռկու անգամից ավելացնում են 55 ալ³ 96 0/0 սպիրտ և զգուշութամբ տաքացնում: Անմիջապես սկսում է մի բուռն սեպկոտ, վորը մեղմացնում են, տաքացումը դադարեցնելով: Շառաչող սնդիկն անջատվում է դեղնավուն ծանր քլուրեղիկների ձևով, վորը ֆիլտրում և լվանում են սառը ջրով: Գործարանային արտադրութայն դեպքում, միանգամից վերցնում են 0,5—1 կգ սնդիկ. ազոտային թթվի եթիլային միացութունների արտադրվող գոլորշիները խտացնում են և կրի վրայով թորելուց հետո կրկին արտադրութայն մեջ մացնում, 100 կգ սնդիկից, հաշված 142 0/0 տեղ, ստանում են 130 կգ շառաչող սնդիկ: Մալրական լուծույթների մեջ մնացող սնդիկը սուղեցնում են կալցիում սուլֆիդով:

Այս պայթուցիկ նյութն ինքնին չի ծառայում հրաձգութայն և պայթումների համար, սակայն այն որվանից, լեբը վերացել է պատուղների և կայծքարային հրահանների գործածութունը, նա կիրառվում է վառելու համար, վորպես պայթումների և հրաձգութայն համար գործածվող մուս պայթուցիկ նյութերի բուռնի: Համեմատաբար թույլ հարվածից պայթելով, նա բոցավառում է մյուս նյութերը, թե պայթման ժամանակ իր արտադրած ջերմութամբ և թե մանավանդ պայթման ժամանակ վերին աստիճանի բրիզանտորեն գոյացող դաղային պրոդուկտների սուր հարվածով: 1799 թ. Գոսվարդի դատած և, Լիբրի ի ի կողմից մանրամասնորեն ուսումնասիրված, շառաչող սնդիկը մինչև որս ել պատրաստվում է հին ձևով—սպիրտով ազոտաթթվի և սնդիկ նիտրատի վրա ներգործելու լեղանակով:

Շառաչող սնդիկն ունի $HgC_2N_2O_2$ բաղադրութուն և, հավանորեն, պետք է ընդունվի վորպես սնդիկական աղ այն շառաչող թթվի՝ $HO-NC$ (կարբոնիլոքսիմ), վորը ցիանաթթվի և իզոցիանաթթվի իզոմերն է և ազատ վիճակում անհայտ է: Շառաչող սնդիկը կազմում է անգույն բլուրեղներ, վոր կարելի չէ վերաբլուրեղացնել յեռացող ջրի միջից և վարոնք սառը ջրի մեջ գրեթե անլուծելի են: Նա խիստ թունավոր է. խոնավ վիճակում բուրբոկի չի պայթում, իսկ չոր վիճակում ուժեղ հարվածից պայթում է սաստիկ ուժով: Վառելիս նա միայն բռնկում է:

Պայթումը տեղի յե ունենում ըստ հավասարման՝
 $C_2N_2O_2Hg = 2CO + N_2 + Hg + 116$ կալ:

Այս հավասարումից հաշված՝ բարեխառնությունը հասնում է 3500°, գազերի տես. ծավալը՝ $V^0 = 413$:

Հրազենների համար լերբեմնի գործածվող կայծքարի փոխարեն արդեն 100 տարուց ավելի յե, ինչ սկսել են գործածել քիմիական բաղադրություններ, նախ՝ բերտուելտյան աղի և անտիմոն սուլֆիդի խառնուրդ, ապա՝ 1830 թ. սկսեցին ավելացնել շառաչող սնդիկ: Նման խառնուրդները զգալուն են հարվածի հանդեպ և պայթման ժամանակ ավելի տաք բոց են առաջացնում, քան մաքուր շառաչող սնդիկը:

1867 թ. Ա. Նոբելն առաջարկեց մաքուր շառաչող սնդիկ պարունակող պատիճներ, ապա 10—20 % $KClO_3$ պարունակող խառնուրդով: Վերջին ժամանակներում շառաչող սնդիկին ավելացնում են զգալի քանակությամբ արինիտրոթուրուլ (ատրոտիլ) կամ, ել ավելի լավ է, տետրանիտրոմեթիլանիլին (ատետրիլ), վորոնք տոնաշեղում են շառաչող սնդիկից:

Նրա՝ հարվածի հանդեպ ունեցած զգալնությունն ուժեղացնելու համար խառնում են նրա հետ կալիում քլորատ և անտիմոն սուլֆիդ. իսկ յեթե կամենում են, վոր նա դանդաղ այրվի (սովորական վառողի պատիճներ), այդ դեպքում խառնում են վառող և այլ նյութեր: Մյուս նյութերի հետ խառնում են այն խոնավ վիճակում, իսկ պղնձե պատիճների մեջ լցնում են չորանալուց հետո (խիստ վատնգավոր աշխատանք է): Խոնավությունից պաշտպանելու համար պատրաստի պատիճները ներսի կողմից պատում են մետաղական ֆոլդայով կամ լակի շերտով:

Հրացանի փամփուռաների համար պղնձից կտրած պատիճների մեջ վառիչ խառնուրդ լցնում են 15 մգ՝ սովորական վառողի համար, կամ 40 մգ՝ անծուխ վառողի համար. սովորական վառողը կպցնելու համար պահանջվում է սրածայր բոց, իսկ անծուխի համար՝ ուժեղ հարված: Հրանոթների մետաղական փամփուռաներն ել կպցնում են պատիճների միջոցով. փամփուռաները բոցավառվում են ֆրիկցիոն (շփական) բուժիկների սզնությամբ. այդ խառնուրդը վառողի շերտով պատած բերտուելտյան աղի և անտիմոն սուլֆիդի մի խառնուրդ է, վորը պայթում է քերիչ լարը նրա միջով անցկացնելիս: Պայթող պատիճները (բուժիկները) ներկայացնում են պղնձե ավելի մեծ գլաններ, վորոնք

պարունակում են $0,3$ ից մինչև 3 գ շառաչող սնդիկ (սովորաբար 15% $KClO_3$ խառնուրդի հետ)։ Նրանք ծառայում են դինամիտ, պիրոկալիին և պիլլրինաթթու պայթեցնելու, քարատեսակներ պայթեցնելու համար, ստորջրյա տեղանների համար և այլն։ Նրանք, իրենց հերթին, վառվում են՝ ա) վառիչ թելերի (չուտե դատարկ մի թել, վորը ներսից լցված է վառողի, մանրուքով, այլվում է 1 սմ 1 վայրկյանում արագությամբ), բ) ելեկտրական կալծերի կամ շիկացնելու վառիչի սղնությամբ, ըստ վորում այդ կալծերը, կամ շիկացրած լարը, վառում են $KClO_3$ և Sb_2S_3 խառնուրդը, իսկ հետո արդեն՝ նաև այդ պատիճները։

Կպպարի ազիդ։ շառաչող սնդիկի փոխարեն նորագույն ժամանակներում կիրառում են կապարի ազիդը՝ PbN_6 ։ այդ բյուրեղավոր, ջրի մեջ զրեթե չլուծվող ազոտաջրածնական թթվի՝ HN_3 կապարական աղն է, վորն ստացվում է նատրիում ազիդալին լուծույթը քացախաթթվական կապարի ոգնությամբ սուղեցնելով։ Վոչ պայթուցիկ նատրիում ազիդը պատրաստում են նատրիումի ազիդից՝ $NaNH_2$, և ազոտսուրքադիդից՝ N_2O , 200° -նում։ Կապարի ազիդը չափազանց վտանգավոր է (տես. կը. 4,8) շառաչող սնդիկից ավելի ուժեղ է պայթում նոլյնիսկ խոնավ վիճակում և տաքացնելիս։ Վորոշ կրիստալական ձևով սուղված լինելու դեպքում կապար ազիդն այնքան էլ վտանգավոր չէ։ այնուամենայնիվ շատ քիչ գործարաններ են այդ միացությունը պատրաստելով զբաղվում։ Մեծ պատիճները ֆարշվում են $0,8$ գ մամլած արտախլով կամ տետրիլով, ապա $0,2$ գ. կապար ազիդով, իսկ դրսից այդ շերտը պատում են նաև $0,2$ գ շառաչող սնդիկով։ Շառաչող սնդիկի բրիզանտությունն ուժեղանում է կապար ազիդի ավելացնելուց։ Մլ ավելի ուժեղ նյութ է հանդիսանում ցիանուրտրիազիդը, վորն ազոտաջրածնական և շառաչող թթուների մի միացություն է ($CN. N_3$)։

ՍՈՎՈՐԱԿԱՆ (ՍԵՎ.) ՎԱՌՈՒ

Հրաձգության համար զործածվող սովորական վառողը միշտ պատրաստվել է կալիում սալպետրի, ածխի և ծծմբի խառնուրդից, վորոնք վերցված են լինում դանազան չափերով, մեծ մասամբ՝ մոտավորապես $75:15:10\%$ հարաբերությամբ։ Թեև ածխի այրման ջերմությունը ծծմբից շատ է լինում, սակայն

սալպետրի և միայն ամօրի խառնուրդը հրաձգութիւն համար պիտանի չե. հենց ծծումբն է, վոր նրանց դյուրավառութիւնն և այլման արագութիւնն է տալիս: Նախկին պրուսական ռազմական վառողը պարունակում էր 76% KNO_3 , 15% ամուխ և 9% S, բացի այդ՝ 0,85—1% H_2O . վորսորդական վառողը՝ 77—78% KNO_3 , 12—13% ամուխ և 10% S:

Մինչև այժմ սովորական վառողը գործածվում է շրապնելներէ և մի քանի ծովային (տկանալին) արկերի լիցքի համար, բացի այդ (քիչ քանակութեամբ)—վորպես լրացում հրետանալին անծուխ վառողի՝ այդ նյութերն ավելի լավ բոցավառելու համար:



Սալպետրն ու ծծումբը պետք է քիմիապես մաքուր լինեն, մանավանդ սալպետրի մեջ քլոր չպիտի լինի: Նատրիումական սալպետրը խոնավացուց է և պիտանի չե միայն ականային վառողի համար: Ավելի ևս խոնավացուց է ամոնիակալին սալպետրը, իսկապես՝ լավագույն սալպետրը, վորովհետև այն ինքնին պայթուցիկ է և պայթելիս վոչ մի մնացորդ չի տալիս. կիրառվում է անվտանգ պայթուցիկ նյութեր պատրաստելու համար: Վորպես ամուխ ծառայում է ծակոտկեն, փափուկ և շուտ ալրվող փայտածուխը, ամենից լավը—բեկանի (Rhamnus frangula) ամուխն է, կամ թե չե՝ լաստենու, լորենու և կաղամախի ամուխը: Սովորական շուտ ամուխն ստացվում է ծառը 300-400°-նում ածխացնելիս. նրա մեջ պարունակվում է 80-93% C, 2-4% H և 3-15% O (+N), քիչ քանակութեամբ (1-3%) մոխրի և 2-10% ջրի հետ այնպես, վոր այն չի կարելի ընդունել վորպես մաքուր ածխածին: Ավելի սակավ կիրառվում է «կարմիր ամուխը», վորն ստացվում է 300°-ից ցածր բարեխառնութեան մեջ և պարունակում է 70-75% C (տես փայտածուխ): Վորջան բարձր է ածխացման ջերմաստիճանը, այնքան խիտ է լինում ստացված ամուխը և այնքան դժվար է նա վառվում:

Այդ լերեք նյութերի նուրբ մանրացրած խառնուրդը կոչվում է վառողափոշի: Սա անպետք է թե հրաձգութեան և թե պայթումների համար, վորովհետև չափազանց դանդաղ է ալրվում, նաև հեշտ փոշիանում և աստիճանաբար վեր է ածվում իր բաղադրիչ մասերին. վառողափոշին պետք է խտացնել և դարձնել հատիկավոր. կիրառվում է միայն հրթիռների և հրձիգ պատրուկների համար:

Մանրացնելու և խառնելու գործողութիւնը կատարվում է գնդային վառողաղացներում և այն էլ լերկու նվազով՝ ա) KNO_2 .

ածուխի հետ, բ) ածուխը ձձմբի հետ. Թմբուկները պատրաստված են թուջից, զնդերը՝ բրոնզից: Յեռակի խառնուրդ կազմելը կատարվում է Ֆրանսիական պնդածառից զնդեր ունեցող կաշվե թմբուկների մեջ, ապա խառնուրդը թրջելով 5—10% ջրով, տեղափոխում են վառողաղացը:

Վառողաղացը ներկայացնում է խիստ կարևոր մի ապարատ (սարք), վոր գործ է անվում արդյունաբերության շատ ճյուղերում. նա ծառայում է լեռնային տեսակներ մանրացնելու, թղթի գանգվածը և ձիթապտղի սերմերը ջարդելու, ինչպես նաև գանտ-




Նկ. 3

զան նյութեր իրար խառնելու համար: Կր ու պպի Գր ու զոնյան գործարանի նման ապարատներից՝ մեկը պատկերված է նկ. 2-ում: Թուջե կամ քարե A սալի (ափսեյի) վրայով ուղղահայաց B ա-

աանցքի շուրջը գլորվում են յերկու ծանր L և L_1 վառողաղաց-
ներ, վորոնք պատրաստված են գրանիտից կամ ավազաքարից՝
մխած թուջե լեւնալին տեսակները, թղթե զանգվածը մանրելու
համար և ալին: Ուղղահայաց լիսեռի ներքևի ծալքը գտնվում է
F գարշաղարի մասում, իսկ վերինն անցնում է անուրի միջով: Լի-
սեռը պատվում է ներքևից C կոնաձև ատամնավոր անիվների
և E փոկազնաց հորովակի ողնությամբ: հաճախ շարժական ուժի
հաղորդիչ մեքենամասը տեղավորված է լինում վառողաղացի
վերևի մասում: L և L_1 վառողաղացները վոչ թե մեկ ընդհա-
նուր հորիզոնական առանցքի վրա լեն հագցրած, ինչպես այդ
լինում էր նախկին սխեմաներում, այլ ունեն առանձին ծուռ
փշավոր G և G_1 առանցքները, վորոնք միասին վերցրած կազ-
մում են կրկնակի ծունկ և մեկ շրջակով մասում են ուղղա-
հայաց առանցքի վերևի մասը, ալն ինչ մյուս շրջակի վրա
դրված է վառողաղացն առանցքային անցքով: դրանով հաս-
նում են ալն նպատակին, վոր լուրաքանչյուր վառողաղաց կա-
րողանում է շարժվել անհարթ մակերևույթի վրայով, չխախտե-
լով իր հորիզոնական դիրքը, վոր զուգահեռ է ներքևի սալին և
վորը նա ճնշում է իր ամբողջ ծանրությամբ: Վորովհետև վառ-
ողաղացների արաքին մասերն ավելի մեծ շրջաններ են գծում
քան ներքինները, ուստի գլղոնները վոչ միայն գլորվում (ինչ-
պես այդ տեղի լե ունենում կոնաձև գլղոնների դեպքում), ալև
սահում են, վորի շնորհիվ վառողաղացային ապարատը հանդես
է բերում հատուկ արտող և ճզմող գործունեություն և, բացի
այդ, խառնում է իրար: Վառողաղացների հետևում տեղավորված
K քերիչներն աղացած զանգվածը կրկին վառողաղացների տակն
են մղում:

Նույն ֆիրմայի վառողաղացային ալն ապարատը, վոր
հատկապես նշանակված է սովորական վառողի համար, պատկեր-
ված է նկ. 3-ում: Այս վերլինը նկ. 2-ում պատկերածից տար-
բերվում է գլխավորապես ալն բանով, վոր թուջե յերկու վառող-
աղացներն էլ կախված են—լուրաքանչյուրը յերկու մետաղաձողի
ողնությամբ—հորիզոնական դարձելից, վորն ամրացված է գըլ-
խավոր առանցքի վրա ալնպես, վոր վառողաղացները, չնայած
իրենց ամբողջ ծանրությամբ ընկած են վառողային խառնուրդի
վրա, ալնուամենայնիվ ներքևի սալին չեն կպչում: Դրանով բա-
վականաչափ փոքրանում է պայթման վտանգը: Վառողաղաց-
ների և ափսելի միջև լեղած ատրածուծ յունը կարելի յե սահմա-


նել ըստ ցանկութեան: Վառուդադացիների գլորվող մակերեսները հղկված են և, բացի այդ, նրանց հարմարեցված են վահանիկներ, այնպես վոր վառողային խառնուրդը չի կարող դուրս թափվել: Վառողի գործարաններում վառողադացային ապարատները զետեղված են լինում թեթև ծածկույթների տակ. այդ ապարատները կանգնեցնում և գործի յեն դրում գործարանի դրսի կողմից, և աշխատանքի ժամանակ նրանցով գրադեցրած շենքերի մեջ չեն մտնում: Այդպիսի ապարատներում վերամշակելու շնորհիվ վառողն այլ վելու համեմատաբար ավելի մեծ արագությունն է ձեռք բերում, քան թե թմբուկների մեջ պարզորեն խառնելիս:



Նկ. 3

Վառողի խառնուրդը վառողադացներում վերամշակելուց հետո, բրոնզե կամ պղնձե սալերի մեջ լենթարկվում է հիդրավիլի մամլման և դառնում վորոշ խտություն (1,5—1,7) ունեցող բլիթներ. այդ բլիթները հատիկների յեն վերածում հատուկ ջարդիչ մեքենաներում, ապա մաղում, չորացնում և հղկում են պտտվող թմբուկների մեջ: Հղկման շնորհիվ հատիկների սուբանկյունները կլորանում են, և հատիկները դառնում են ավելի հարթ, իսկ փայլը հատիկներին տրվում է հղկելիս քիչ քանակույթյամբ գրաֆիտ գործածելով. սակայն փայլը մնասում է վառողի գլորավառութեանը: Վորովհետև դժվար է ստանալ վառողի արտադրանքների միատեսակ մասնակներ (партия), ուստի վորոշ բաղադրություն և հրաձգության ժամանակ վորոշ ներգործություն ունեցող ծախու վառող ստանալու համար վառողի մի քանի մասնակները խառնում են իրար հետ:

Վորսորդական վառողի հատիկները 0,3—0,5 մմ մեծություն ունեն, հին մաուզերյան հրանոթների վառողը՝ 0,5-ից 1 մմ, նախկին դաշտային հրետանու C/73 վառողը՝ 4-ից 9 մմ, իսկ տեսակարար կշիռը 1,5--1,6. այն ինչ բերդային և ծովային



խոշոր հրանոթների համար այրումը քիչ դանդաղեցնելու նպատակով պատրաստում են մամլած վառող, վորը բաղկացած է խոշոր, հավասարաչափ հատիկներից և վորի յուրաքանչյուր հատիկը կշռում է 40-ից 100 գ: Հատիկավոր վառողի մամլումն ու ձևավորումը կատարվում է խիստ սրամիտ պատրաստած մեքենաներում (հիդրավլիկորեն կամ թե չե տարակենտրոնի ոգնու թլամբ աշխատող), պողպատե պարկուճներում և արուլքի մխոցով, ըստ վորում վառողի տեսակարար կշիռը հասցնում են մինչև 1,9-ի: Նման գլանային կամ պրիզմային հատիկների միջով անցնում են մի քանի միջանցիկ անցքեր, վորպեսզի վառողային լիցին համահավասար բոցավառման հնարավորություն տրվի: Առաջներում խիստ տարածված էր չափազանց դանդաղ այրվող կինամոնադուլին պրիզմային Օ/82 վառողը, վորը բաղկացած էր 79% KNO_3 , 3% S և 18% կարմիր ածխից, սակայն այժմ նա ևս վառված է անծուխ վառողի կողմից:


Վառողի այրման ժամանակ գոյանում են մոտ 43% դազեր գլխավորապես ածխածին, ազոտ, ածխածին ռախիզ և 57% կարծր արտադրանքներ (K_2CO_3 , K_2SO_4 , $\text{K}_2\text{S}_2\text{O}_8$ և K_2S), վորոնք ուժեղ ծուխ են առաջացնում: Նայած վառողի կազմին և ճնշմանը, վորի ընթացքում տեղի չե ունենում այրումը, այրման արտադրանքները մի քիչ տարբեր են լինում, և դրա համար ել վառողի այրման պրոցեսը չի կարող վորոշ քիմիական հավասարությամբ արտահայտվել: Վառողի ենթադրյալ համապատասխանում է 650—700 կալ., նրա գազերի տեսակարար ծավալը՝ մոտ 250 լ Գատարկության մեջ սովորական վառողը շատ դանդաղ և այրվում, ճնշման տակ՝ ավելի արագ քան բաց ոդրւմ:

Հանգի վառող. Գարահանքերում կամ աղահանքերում պայթման աշխատանքներ կատարելու համար գերադասելի չե ոգտվել դանդաղորեն այրվող վառողներով, վորոնք բրիզանտ ներդրածութուն չունեն, ուստի և նյութը չեն փշրտում: Չանազանում են 65—70—և 75% նոց վառողներ, վորոնք պարունակում են 65, 70 և 75% KNO_3 , 10—15% S և 15—20% ածուխ: Սալպետրի պարունակութունն ավելանալու հետ ավելանում է պայթուցիկութունը և վառողի դինը: Ավելի աժան է պայթուցիկ սալպետրը, վոր պարունակում է 76% NaNO_3 , 10% S և 14% փայտածուխ կամ դորշ ածուխ: Պետրոկլաստիաբ բաղկացած է 5% KNO_3 , 69% NaNO_3 , 10% S , 16% քարածխի ձյութից, 1% $\text{K}_2\text{Cr}_2\text{O}_7$ և ալյու: Նման վառողները դանդաղ են պայթում,

սակայն խոնավածուծ են: Հանքի վառողները գործ են անվում կամ խոշոր-հատիկավոր ձևով, կամ թե չե թելի մեջ մամլած դրուժվամբ:

Կալիում քլորատով վառող. Կալիում քլորատը դանիուլյ անմիջապես հետո, 18-րդ դարի վերջում, Լավուա աղի են և բերատու են փորձեր ելին կատարում սալպետրի փոխարեն կալիում քլորատ պարունակող վառողի հետ, սակայն ծանր հետևանքներ ունեցող մեկ պայթյուն յերևան հանեց այն մեծ վտանգը, վոր սպառնում ե կալիում քլորատի ալգալիսի խառնուրդների հետ գործ ունենալիս: Յերբ կալիում քլորատ պարունակող վառողի մեջ մտնում ե նաև ծծումբ, վառողը չափազանց հեշտ ե բոցավառվում, հրաձգության համար նա խիստ փշրտող ներդրոճութուն ե ունենում, ըստ վորում կաղմվող գազերը քայքայում են հրացանի փողը: Անգամ վտանգավոր ե նրա տեղափոխումը:

Կալիում քլորատը տաքացնելիս կարող ե պայթել հենց ինքն իրեն, ըստ հավասարության՝



Վերջին ժամանակներում սկսել ե կիրառվել Չեդեդե (Chedde, Մավոյալում): Այդ բերտոլիտյան աղ ե (գերչակի կամ հանքալին) յուղերի և որգանական նիտրոմիացութունների (նաֆտալին, դինիտրոնոլոն) խառնուրդով: Այս խառնուրդները կազմում են մի պլաստիկ զանգված, վորը շրջապատում ե աղին և դրանով իսկ փոքրացնում շփումը: Այդ ախլի միջանի պլսթուցիկ նյութեր գոյութուն ունեն: Որինակ՝ չեդդեդեի տեսակներից մեկը բաղկացած ե 80% KClO_3 (NaClO_3), 5—8% գերչակի յուղից, 12—15% դինիտրոբենզոլից (կամ դինիտրոնոլոլից) կամ նիտրոնաֆտալինից: Մի գլան կիտը բաղկացած ե 90% KClO_3 և 10% նավթից: Ալգալիսի վառողներ պատրաստում են կալիում կամ նատրիում պերքլորատից, սակայն այնլի ձեռնառ չե վերցնել շատ տարբալուծվող ամոնիում պերքլորատը, վոր մտնում ե բազմաթիվ պայթուցիկ խառնուրդների մեջ: Պերմանիտը պարունակում ե 37% KClO_4 , 36% $(\text{NH}_4)\text{NO}_3$, 7% NaNO_3 , 10% $\text{C}_7\text{H}_5(\text{NO}_2)_3$, 7% ալլուր և 1% ժելատին: Զոնկիտը բաղկացած ե 82% NH_4ClO_4 , 13% $\text{C}_7\text{H}_6(\text{NO}_2)_2$ և 5% գերչակի յուղից: Ամոնիում նիտրատ մտցնելը վորոշ չափով իջեցնում ե պատրաստի պլսթուցիկ նյութի զգայնութունը: Պատերազմի ընթացքում լայն կիրառում ունեին ալգալիսի վա

ուղները, մանավանդ թուղ ումբներ, ձեռնանոնակներ, ալա-
ներ և այն լցնելու համար:

Ուսիրիկվիս. Ոքսիրիկվիս կոչվում է անխափոշու և հեղուկ
ուղի խառնուրդը, վորը պայթեցնող բավական բարձր ույժ ունի:
Նկատի ունենալով չիլանյութերի մատչելիութունը, պայթուցիկ
նյութի այդ տեսակը պատերազմի ընթացքում մեծ հետաքրք-
րություն է ներկայացնում: Մրից պատրաստած փամփուռները
(ինչպես նաև թեփի և տորֆի ալյուրինը), որինակ՝ 60 գ կյոող-
ները առգորվում են հեղուկ ողով և 80—85¹⁾ թթվածնով: Տոգո-
րումից հետո նման փամփուռի կշիռը պետք է քառապատկվի
Վառելու գործողութունը կատարվում է երկտրական հոսանքով
կամ թելով: Պայթյունն ուժգին փշրտող ներգործութուն ունի
Փամփուռները առգորումը կատարվում է պայթյունի տեղում-
առգորումից վոչ ուշ քան 2—3 բույն հետո պետք է պայթեցնել
վորովհետև թթվածինը շատ արագ է ցնդում: Այդ հանգամանք-
դժվարացնում է ժայռի մըջով անցկացրած բաղմաթիվ թելերի
միամամանակյա պայթումը: Հեղուկ թթվածինը հեշտությամբ
ստացվում է հեղուկ ողից կամ գործադրման տեղում, կամ բեր-
վում է ապակուց, ել ավելի լավ է՝ հաղձապակուց կամ մետաղից
պատրաստած դյուարյան անոթներով:

ՆԻՏՐՈՂԻԾՆԵՐԻՆ

Պայթուցիկ նյութերի նոր դարաշրջանն սկսվում է այն ար-
վանից, լերը Շյոնբեյնը և Բյոտգերը (1846 թ.) գտան
պիրոկսիլինը (շառաչող բամբակը) և Սոբերբոն (1846 թ.)—
նիտրոզլիցերինը, սակայն 1867 թ. միայն սկսեցին պատրաստել
արդի պայթուցիկ նյութերի առաջին տեխնիկապես պիտանի
նմուշները՝ դինամիտը (Նոբել) և անծուխ պիրոկսիլինյան վա-
ռոդը (Վիելլը 1885 թ.): Պիրոկսիլինը և նիտրոզլիցերինը բաղ-
մատով սպիրտների լեթերներ են, վոր սխալմամբ կոչվում են
նիտրոմիացութուններ:


$C_2H_5(ONO)_2$ —զլիցերինի ազոտաթթվական լեթեր, նիտրո-
զլիցերին:

$C_{12}H_{14}O_4(ONO)_6$ —թաղանթանյութի ազոտաթթվական լե-
թեր, հեկսանիտրոթաղանթանյութ, պիրոկսիլին, շառաչող բամ-
բակ:

Այդպիսի միացությունները, ինչպիսի՝ ազոտամեթիլ լե-
թերը՝ CH_3ONO_2 , ազոտազլիկոլ յթերը՝ $C_2H_4(ONO)_2$, նիտ-


քանրիտրիաը՝ $C_4H_6(ONO_2)_4$, նիտրոպենտանրիտրիաը, նիտրոմաննիտր՝ $C_6H_8(ONO_2)_6$ —նույնպես պայթուցիկ են, սակայն մինչև քրա գործ չեն անվում վորպես պայթուցիկ նյութ: Այս բոլոր ազատային լեթերները սպիրտային ալկալիով հեշտությամբ ոճապացվում են. ինչպես ազոտաթթվից, նրանցից ևս կարելի չեն հեշտությամբ քանակապես առանձնացել ազոտն ազոտոքսիդի ձևով՝ յերկաթքլորիդի և HCl -ի ոգնությամբ, և վորոշել NO ձևով:

Նիտրոգլիցերին՝ $C_3H_5(ONO_2)_3$ պարտասելը. Նիտրոգլիցերին հեշտությամբ ստացվում է, ազդելով ջրազուրկ գլիցերինի վրա բարկ ազոտաթթվով կամ, ավելի լավ է, ազոտաթթվի և ծծմբաթթվի հիդրատների խառնուրդով, հետևյալ հավասարությամբ.



Ծծմբաթթուն կապում է ռեակցիայի ընթացքում արտադրվող ջուրը, նպաստում է ռեակցիայի ընթացքին, կազմելով միջանկյալ արտադրանքներ՝ ծծմբազոտական լեթերներ: Գլիցերինը պետք է լինի մաքուր և ջրազրկած: 100 կգ գլիցերինի հետ, վորի տես. կշ. է 1,27 ($=31^\circ B\acute{e}$), վերցնում են 265 կգ 1,5 ($=48^\circ B\acute{e}$) տես. կշ. ունեցող ազոտաթթու և 350 կգ 1,84 ($66^\circ B\acute{e}$) տես. կշ. ունեցող ծծմբաթթու: Ռեակցիան կատարում են փայտի շրջապատ ունեցող կապարե չանի մեջ (նկ. 4, ըստ Գ ու տ մ ա ն ի), D-ից օձում են չանի մեջ թթուների խառնուրդը, իսկ հետո անընդհատ խառնելով ու սառեցնելով՝ A չափիչից բարակ շիթով բաց են թողնում գլիցերինը: Պառնելու գործողությունը կատարվում է (E և F խողովակներով) սեղմված ոգ փչելով. J և N-ը սառեցնող կապարե գալարքներն են. C-ն դազեր հեռացնող խողովակն է. բացի այդ, չանի մեջ տեղավորվում են մի քանի ջերմաչափ: Գլխավոր դժվարությունն է հետևել, վոր բարեխառնությունը $25-30^\circ$ -ից ավելի չբարձրանա. 30° -նում սկսում են արտադրվել կարմիր գույնի գոլորչիներ, վորոնք դրանից հետո մեծ մասամբ հասցնում են պայթման: Ապարատները մեկիկ-մեկիկ տեղավորում են բարձր հողապատնեշներով շրջապատված բետոնե տնակներում: Ամենալավ արդյունքն ստացվում է $20-25^\circ$ -նում: Հեղուկն անց են կացնում չափիչ ձագարի մեջ (նկ. 5, ըստ Գ ու տ մ ա ն ի), աբ նա բաժանվում է յերկու շերտի. թթուների ավելի ծանր

շերտի վրա լողում և նխորոգելիցերինը: Ներքևում նեղացող, կապարե կոնաձև անոթի մեջ դրված ապակե պատուհանները, նույնը P և N մոտ, ծառայում են դիտողութունների համար: Նխորոգելիցերինի անջատված շերտը բաց են թողնում ջրով լի L անոթը, ուր ալդ շերտն անմիջապես խառնելով սեղմված ոդի ոգնությամբ (O խողովակով), բազմիցս լվանում են ջրով. ապա խնամքով շեղոջացնում են սողայի լուծույթով, նորից լվանում և, վերջապես, ֆիլտրում խոհանոցի աղի կամ սողալի շերտի միջով: Թթվային շերտը թողնում են հանգստանա գլիցերինի մնացորդներն անջատելու համար: Նխորոգելիցերինից խնամքով մաքրված թթվային մնացորդները վերականգնում են գործարանի հատուկ բաժանմունքում. ազոտի ոջիղները հեռացնում են թթվային խառնուրդի մեջ աաք ոդ և ջրի գոլորշիներ մտցնելով, և խտացնելով դարձնում են ազոտաթթու. իսկ ձծմբաթթուն



Նկ. 4


խտացնում են գոլորշիացնելով:

100 մաս գլիցերինից ստանում են մինչև 230 մաս մաքուր տրինիտրոգլիցերին (հաշված 246,6-ի տեղ). վերջում ռեակցիան դժվարությամբ և առաջ ընթանում, ալնպես վոր միշտ ել մնում քիչ քանակությամբ գլիցերին և մոնոնիտրոգլիցերին, վորոնք լուծվում են թթվի մեջ: Յեթե նախազգուշացման ըլորը միջոցները ձեռք են առնված, այս արտադրութլունը միանգամայն անվտանգ և:

Նխորոգելիցերինը ներկայացնում է մի անգույն, մեծ մասամբ քիչ դեղնավուն լուղ, տեսակարար կշիռն է 1,60, ունի քաղցր համ, թունավոր է և քիչ ցնդող. նրա գոլորշիներն առաջացնում են գլխացավ և գլխապտուտ: Ջրի մեջ գրեթե անլուծելի յե, +13°-նում կարծրանում է և այդպես սառած վիճակում:


խիստ վաճառվոր եւ Յեթի նա մաքուր եւ և թթուներ չի պարունակում, անփոփոխ վիճակում կարող եւ պահպանվել բազմաթիվ տարիներ, իսկ անմաքուր վիճակում նա շուտով ինքն քայքայվում եւ Փորձանոթի մեջ ջրաբազնիքի վրա մինչև 70° տաքացնելիս, նա պետք եւ 15 բուպելից հետո միայն յողջինկոսլալին թղթին կապույտ գույն տա:

Նրա փաքրիկ քանակութունը բաց ողում վառելիս ալրվում եւ աղմուկով: Մինչև 180° արագ կերպով տաքացնելիս, հարվա-



Նկ. 5

ծից, ցնցումից կամ շառաչող սնդիկի փամփուռալի պայթյունից եւ պայթում եւ սոսկալի ուժով, հետևյալ հավասարութիւամբ.




Հակառակ պիլրոկսիլինի, նրա մեջ ալրպիսով ավելի շատ թթվածին եւ պարունակվում, քան պետք եւ նրա յրիվ այրման համար: Դանդաղ այրման կամ նվաղեցրած ճնշման ժամանակ կազմվում են նաև ազոտդիօքսիդ եւ ածխածինօքսիդ: Նրա եներգիւալի եւ փշրտող ներգործութիւան աստիճանի մասին տես եջ 2-3:

Մտած նիտրոզլիցերինի ներկայացրած մեծ վտանգը դրդել եւ հայտնաբերել այլ նիտրոզլիցերիններ, վորոնք հեղուկ են մնում անգամ ձմեռալին սառնամանիքների ժամանակ: Այսպես, որի-

նակ, չեն սառում դինիարոքլորհիդրին և տեղանիարոզիլիցերինը, ինչպես նաև այս վերջիններին և արինիարոզիլիցերինի խառնուրդը:

Դինիարոզիլիցերիններն ազդում են ավելի քիչ լեռանդով և բավական լավ լուծվում են ջրի մեջ: Շատ լավ է նիարոզիլիկոլը՝ $C_2H_4(ONO_2)_2$, տես. կշ. 1,5: Այս միացութունն իր եներգիտով գերազանցում է նիարոզիլիցերինին, սակայն այս վորոշ չափով ավելի ցնդող է և այնքան զգալուն չէ: Պայթման ժամանակ նիարոզիլիկոլը քայքայվում է հետևյալ հավասարութամբ.



Սակայն գլիկոլը քիչ մատչելի նյութ է:

ԴԻՆԱՄԻՏ

Մաքուր նիարոզիլիցերինը Յեվրոպայում պայթյունների համար չի գործածվում, վորովհետև նա տեղափոխման իսկ ժամանակ կարող է պայթել: Ամերիկայում նիարոզիլիցերինի ոգնությամբ պայթեցնում են նավթահորերի անցքերը: Սկզբնական շրջանում Նոբելը փորձում էր նիարոզիլիցերինը տեղափոխումներին ընդունակ դարձնել, ավելացնելով վրան մեթիլ սպիրտ, սակայն 1867 թվին նա լուծեց հարցը, հայանագործելով դինամիտը, այն է՝ նիարոզիլիցերինի և կիզելգուրի խառնուրդը: Լյունբերգցյան փափուկ կիզելգուրը, վոր բաղկացած է դիտոմեա ջրիմուռների զրահներից, կարող է ներծծել նիարոզիլիցերինի լեռակի քանակութուն ըստ քաշի, ըստ վորում ստացվում է մի պլաստիկ զանգված, վորի հետ գործ ունենալը միանգամայն անվտանգ է: Կիզելգուրյան այս դինամիտը մի շարք դինամիտների, այն է՝ նիարոզիլիցերինի և զանազան ծակոտկեն նյութերի խառնուրդների համար ծառայել է վորպես նախատիպ:

Ա. Անգործոն հիմքեր ունեցող դինամիտներ՝ կիզելգուր դինամիտ, Նոբելի թ 1 դինամիտ. Մրա մեջ պարունակում է սոլորաբար 75% նիարոզիլիցերին և 25% կիզելգուր՝ 1/2% սոդայի խառնուրդով: Այլ ինդիֆերենտ նյութեր, ինչպես՝ կաոլին, կավիճ, օքրա—ավելի քիչ են պիտանի այդ նպատակի համար: Խառնուրդը մամլում են 6—10 սմ յերկարություն և 1—2 սմ հաստություն ունեցող փամփուռաների ձևով և պատում են յուղած թղթով. փամփուռաները կաթիլներ չպիտի առաջացնեն: Կիզելգուր դինամիտը տեղափոխման ցնցումները

Վով և տանում, սակայն պայթում և հարվածող գնտից: Պարզ ձևով վառելիս, մեկ փամփուշտն այրվում և առանց պայթյունի, իսկ մեծ քանակությամբ՝ կարող և պայթել: Յեթե կիզելուը դինամիտը յերկար ժամանակ տաքացնեն 60° -ից բարձր բարեխառնության մեջ, որինակ՝ վառարանի վրա, կամ թե չե արագորեն տաքացնեն մինչև 180° , ալդ դեպքում նա պայթում և Ետառող սնդիկի պատիճը, պայթելով և մեծ ճնշում առաջացնելով, միշտ ելառաջացնում և դինամիտի պայթյուն, վորին ուղեկցում և փշրտող ուժեղ ներգործություն. բուժինի անբավարարություն դեպքում պայթման փոխարեն կարող և տեղի ունենալ զանդաղ այրում, վորի ընթացքում զոյանում և ազոտթագազային ռքսիդների մի հսկայական քանակություն:

Ջրի տակ պայթեցնելու համար դինամիտը շատ քիչ և պլտանի, վորովհետև ջուրն անջատում և նիտրոզլիցերինը: Ներկայումս Գերմանիայում կիզելուը դինամիտը չի արտադրվում:

Բ. Գործոն հիմքեր ունեցող դինամիտներ. Կիզելուըն անգործոն բալլասա և, վորը մեծացնում և ծավալը և փոքրացնում կատարվող աշխատանքի քանակությունը: Կիզելուըը կարելի յեր մասամբ կամ ամբողջովին փոխարինել ուրիշ կարծր, պայթմանը մասնակցող նյութերով, մանավանդ ածխածնային նյութերով, վորոնք կկապելին նիտրոզլիցերինի թթվածնի ավելցուկը: Խառնուրդներն ավելացնում են նաև նրա համար, վոր ներգործությունն ավելի քիչ փշրտող դարձնեն կամ եժանացնեն պայթուցիկ նյութը: Նոբելի Ն 3 դինամիտը՝ 85% փոշուց, վոր բաղկացած և $84,5\%$ NaNO_3 -ից և $0,5\%$ Na_2CO_3 -ից, պարունակում և 15% նիտրոզլիցերին և 15% քաբածխալին փոշի (կոչվում և նաև ռեկսիտ) և ուրիշ շատ նյութեր: Սակայն բոլոր դինամիտներից կարևորագույնը հանդիսանում և պայթուցիկ ժելատինը:

Պայթուցիկ ժելատին պատրաստում ևր Նոբելը 1875 թվից սկսած. իր ենթադիայով և անվտանգությունմբ նա խիսա գերազանցում և կիզելուը դինամիտը և ավելի ու ավելի դուրս քշում նրան: Պայթուցիկ ժելատինը բաղկացած և $91-93\%$ նիտրոզլիցերինից և $7-9\%$ կոլլոդիոն բամբակից, վորը նույնպես պայթուցիկ և: Վերջինը լուծվում և մինչև 50° տաքացրած նիտրոզլիցերինի մեջ մինչև 10% քանակությամբ. սառեցնելիս խառնուրդը պընդանում և կարծր թափանցիկ դոնդողի ձևով, տես. կշ. 1,62, վորը

հեշտությամբ հունցվում է և փամփուշտների ձև ստանում: Կոլլոդիոն բամբակը (եջ 32) պետք է պարունակի, վորքան կարելի յի, շատ ազոտ, բայց միաժամանակ նիտրոգլիցերինի մեջ լուծելի պետք է լինի: Յերկու նյութերը խառնելու գործողությունը կատարվում է պղնձե մեծ ջրաբաղնիքներում, 45°-ում, փայտե թիակով խառնելով:

Պայթուցիկ ժելատինը բոլոր տեսիկական պայթուցիկ նյութերի մեջ ամենաբարձր հներգիա պարունակողն է և այդ տեսակետից գերազանցում է նույնիսկ մաքուր արին/արոգլիցերինը, վորովհետև նրա ավելցուկ թթվածինն այրում է կոլլոդիոն բամբակի O և H-ի ավելցուկները: Նա ավելի քիչ զգայնություն ունի, քան կիզելզուր դինամիտը և կարող է պայթել միայն հատուկ, խիստ յեռանդուն բուժիններից, սակայն զբաղվողներն պայթում է համաստիպես և չափազանց բրիզանտ ներգործությունը (աբազությունը 2—7 հազար մ/վայրիյամում)՝ ժելատինից նիտրոգլիցերին չի արտահոսում, ուստի և նա կայուն է և ջրի տակ:

Պայթյուններ կատարելու համար նույնպես լայն կերպով կիրառվում են ժելատինյան դինամիտներ, վորոնք բաղկացած են պայթուցիկ ժելատինի և այլևայլ փոշենման նյութերի մեծ կամ փոքր քանակներից կազմած խառնուրդներից: այդ խառնուրդներն անում են պայթուցիկ նյութերն եժանացնենելու, ինչպես նաև նրանց բրիզանտությունը թեթևացնելու համար: Այսպես, որինակ, Միսսուրիյան տոնելն անցկացնելիս, բացի պայթուցիկ ժելատինից կիրառվում էյին նաև՝ ժելատին II, վոր բաղկացած է 82% նիտրոգլիցերինից, 6% կոլլոդիոն բամբակից, 9% NaNO_3 և 3% փայտաթեփից, և ժելատին III, վոր միկնուկն նյութերը պարունակում է՝ 57,5:2,5:32:8% հարաբերությունը:

Պրուսիայում 1923 թվից լեռնալին գործում կիրառվում են, որինակ՝ դինամիտ I, վոր բաղկացած է 61—63,5% նիտրոգլիցերինից, 1,4—4% կոլլոդիոն բամբակից, 25—29% NaNO_3 , 6—9% փայտի այլուրից և 0—2% Na_2CO_3 , ամոնիումի ժելատին I, վոր պարունակում է 28—33% դինիտրոքլորհիդրին, 1—3% կոլլոդիոն բամբակ, 45—50% NH_4NO_3 , 10—15% NaNO_3 , 6—12% նիտրոթրոլուոլ և 0—2% բուսական այլուր: Բացի վերոհիշյալներից, հիշատակենք նաև քլորա—և պերքլորաթթվական խառնուրդները: Միտանգամայն անվտանգ է այսպես կոչված ժելատին—աստրալիտը, վոր պարունակում է դինիտրոքլորհիդրին և ամոնիում նիտրատ:

ՊԻՐՈԿՍԻԼԻՆ (ԲԱՄԲԱԿԻ ՎԱՌՈՐԻ)

Թաղանթանյութը՝ $nC_6H_{10}O_5$, ձծմբաթթվի և ազոտաթթվի խառնուրդներով հեշտությամբ դառնում է ազոտաթթվի լեթերանյութ թթվի խառնուրդ, թաղանթանյութի մեկ մասնիկի մեջ մտնում են 2-ից մինչև 6 նիտրո խմբեր: Տեխնիկական նշանակություն ունեն՝

Դինիտրոթաղանթանյութը, կոլլոզիոն բամբակը՝ $nC_6H_8(NO_2)_2O_5$ 11,11% N-ի հետ:

Տրինիտրոթաղանթանյութը, պիրոկալինը՝ $nC_6H_7(NO_3)_3O_5$ 14,14% N-ի հետ:

Վորովհետև թաղանթանյութի մոլեկուլը շատ խոշոր է, ուստի գոլություն ունեն նիտրացման բազմաթիվ միջանկյալ աստիճաններ՝ թաղանթանյութի ըստը յեթերները ներկայացնում են նման խառնուրդներ: 13,4—13,9% ից ավելի N մտցնել չի հաջողվում, վորովհետև լեթերները ջուր պարունակող թթվով ոճառացվում են:

Մինչև այժմ վորպես լեյանյութ ծառայում է մաքրած և ճարպազրկած բամբակը, ավելի սակավ—մաքրած, լիգնինից և պենտոզաններից ազատ փայտի թաղանթանյութը, վորովհետև նա, շնորհիվ մաքրման դժվարությունների, չափազանց թանգ է: Ինչպես և գլիցերինի դեպքում, նիտրացումը կատարվում է 1 մ HNO_3 և 5—20% ջուր պարունակող 2—3 մ H_2SO_4 -ի խառնուրդով: Բարձր նիտրացման յենթարկված բամբակի համար պահանջվում է խիստ բարկ խառնուրդ, կոլլոզիոն բամբակի համար՝ մեծ քանակությամբ ջուր պարունակող խառնուրդ: Նիտրացման աստիճանը կախված է թթուների խառնուրդից, ինչպես նաև H_2SO_4 -ի համեմատական պարունակությունից, բայց վոչ յերբեք ներգործության տևողությունից: Վորովհետև թեկերի՝ ողով լցված խողոնները դժվարացնում են թթուների ներս մտնելը, ուստի 1—2 ժամ թեկերը թողնում են թթուների մեջ: Բամբակին հատուկ խոշոր ծավալի հետևանքով ստիպված են աշխատել թթուների խոշոր ավելցուկով, վորը կրկին աշխատանքի մեջ են մտցնում թարմ խառնուրդ ավելացնելուց հետո:



Աշխատանքն ավելի լավ է ընթանում Սելվիգի և Լանգելի նիտրացող ցնտրոֆուգերում, վորոնք պատկերված են նկ. 6-ում: Քարե պատվանդանի վրա ամրացված թուջե կամ լերկաթե G շրջապատում պտտվում է ձ ուղղահայաց առանցքը՝ անցքեր ունեցող լերկաթե T թմբուկի հետ միասին,

վորի տրամագիծն է 1200-1500 մմ. Առանցքն իր ներքևի ծայրով ընկած է զարդապարուճ՝ Է-ի մոտ, իսկ նրա վերևի ծայրն անցնում է կոնսաձև Ե անոթի միջով: Գործիքը շարժման մեջ է դրվում հարևան սննյակից հաղորդող Դ փոկի միջոցով, վորն ամրացված է 3 հորովակի առանցքին: Ա մետաղաձողի միջոցով փոկը կարելի է մի կողմ հրել և Ե արգելակի ոգնությամբ ցենտրոֆուգը կանգնեցնել: Անուրի մաշվելու հետ միասին ց լծակի և քց անդակալող պտուտակների ոգնությամբ առանցքն իջեցնում են ցած: Նիտրացնող թթուները ներս և դուրս թողնելու համար ծառայում են Կ, Է, Կ և Մ խողովակները: Թթու գոլորշիները թույն Ծ դրվագի միջով անցնում են Ո կավե խողովակի մեջ: Ը լերկաթից կամ ալումինից պատրաստած մի թեթև ծածկոց է. առանցքակալները հնարավոր չափով պաշտպանված են թթուների և թթու շոգիների հետ շփվելուց:

Նախ լցնում են թմբուկն ու շրջապատը նիտրացնող խառնուրդով, ապա ներս են տանում 12-13 կգ բամբակ, վորն ալումինի յեղանով ուժեղ կերպով սեղմում են: Ազոտալին թթվի գոլորշիների խառնուրդից ազատված թթու գոլորշիները դուրս են ձծվում (ծածկոցն այդ ժամանակ բաց է լինում) կավե քսահաուտերների միջոցով. պտույտների փոքրաթվության դեպքում թթուն պտտվում է թմբուկի մեջ: Ռեակցիան վերջանալուց հետո բացում են դուրս թողնող ծորակը, և թթուների գլխավոր մասան դուրս են թողնում, իսկ հեղուկի մնացած մասը բաժանում են, գործի դնելով ցենտրոֆուգը և դրա հետ միասին փակելով ծածկոցը. թթվից դեռևս լավ չազատված, հեշտությամբ բոցավառվող բամբակե վառոցը տեղափոխում են կողքում գտնվող և հոսող ջրով լցված ապարատը, վորտեղից ջրի հոսանքով նա տարվում է լվանալու բաժանմունքը: 1,3 մ տրամագիծ և 26 կգ ծավալ ունեցող մեկ ցենտրոֆուգը 8 լիցի դեպքում 10 ժամում հալթալթում է 335 կգ պիրոկսիլին:

Դրան հետևում են ջրով լվանալն ու լեփելը, ապա կտրատող հոլկնդերի մեջ կտրատելը, կրկնվող բազմաժամյա յեռացումը ջրի մեջ և խառնիչներ ունեցող ապարատներում խնամքով լվանալը, ըստ վորում յերբեմն 0,5⁰/₁₀ կալիում կարբոնատ են խառնում. վերջի վերջո քամվում է ցենտրոֆուգերում: Յեփելն անպայմանորեն անհրաժեշտ է, վորպեսզի արտադրանքը կալուն լինի. լեփելու յերկարատևությունը կարելի է կարճացնել, յեթե այն տեղի ունենա 3—5 մթնոլորտ ճնշում ունեցող կաթ-


սաների մեջ. չորացնող կամերներում 30—40°-նում չորացնելը կապված է վտանգի հետ, վորովհետև չոր շառաչող բամբակն ընդունակ է կլեկարականանալու և շփումից կայծեր տալ. և դրա համար ել ջուրը հեռացնում են՝ լվանալով սպիրտով, վորի համար արտադրանքն սպիրտի հետ ցենարոֆուզում են հատուկ



նկ. 6

ցնարաֆուզերում: Այդ գործողութիւնից հետո անծուխ վառապատրաստելու համար նշանակված արտադրանքն անմիջապէս անցնում է ժելատինացնող անոթները:

7 և 8. նկարները պատկերում են Ֆրիդրիխ Կրուպպի Գրուզոնյան գործարանի հոլլենդերը (պիրոկարիլինը մանրացնելու և կտրտելու համար): Ճիշտ այդպիսի հոլլենդեր կիրառվում է սովորաբար կտորեղենից կամ թաղանթանյութից թղթի զանգված պատրաստելու համար: Մանրացրած զանգվածը, խառնելով ջրի հետ, շրջանալին շարժման մեջ են դնում՝ ըստ յերկարութեան 1 պատ և յուրահասուկ այիքանման հատակ ունեցող թուջե տաշտի մեջ: Նկարում տրված արամատը պատկերում է մեջտեղում՝ հատակի ձևի մեկ մասը, իսկ կողքերում՝ մյուս մասը: Հորիզոնական A առանցքի շուրջը պտտվում է B թմբուկը՝ իր վրա տեղավորված բրոնզե դանակներով. նրա տակ, թամբի պես բարձրացող հատակի մասում, գտնվում է բարակ և նեղ C տախտակը (շեմքը) կանգնած բրոնզե դանակներով, այնպես վոր պտտվող թմբուկով շարժման մեջ դրվող զանգվածն, անցնելով յերկու շարք դանակների միջով, կտրատվում է մանր մասերի: Այն թարուկը, վորի վրա շարված են դանակները, կարելի լի բարձրացնել և իջեցնել և պտտող անիվի և e e պտուտակավոր իլի միջոցով: L փայտե ծածկոցը չի թողնում, վոր հեղուկը դես ու գեն ցայտի, և k անցքերը ծառայում են ապարատը դատարկելու համար:




Նկ. 7

Լ վառարանը հոլլենդերի մեջ գտնվում է մի կողմից՝ խառնիչը, մյուս կողմից՝ դանակներով թմբուկի տեղ դրված է

մետաքան դադով պատած լվացող թմբուկը, վորն իր մեջ է առնում լվանալուց դուրացած թթու ջրերը, իսկ թեւերը պահում է. ապարատի մեջ անընդհատ թարմ ջուր է հոսում:

Պիբոկսիլին, բամբակ է վառող, շառաչող բամբակ, հեկտակ պենտանիտրոթաղանթանյութ պատրաստվում են 13,4—12,6⁰/₁₀ ազոտի պարունակութիւամբ: Իր արտաքին փխրուն թելանման կառուցվածքով նա միանգամայն նման է սուլֆուրական բամբակին, սակայն շատ շուտ է բոցավառվում. բաց ողում նա բռնկվում է վոչմի ձայն չհանելով և այրվում է առանց ծխի և մնացորդի: Սկզբում, մինչև 1870 թ. ներառյալ, չէր հաջողվում ստանալ այն հաստատուն, կայուն պրեպարատի ձևով—թթունների և այլ փոփոխական խտոնուրդների ամենաչնչին հետքերը մնալու դեպքում յենթարկում են նրան աստիճանական քայքայման,




Նկ. 8

Վորը կարող է վերջանալ պայթյունով: Արեւն Անգլիայում (սկսած 1870 թ.) կարողացավ պիրոկսիլինը կայունացնել, լենթարկելով այն մանրացման և այլն, և ցույց տվեց, վոր ուժեղ մամլած և շառաչող սնդիկից պատրաստած ուժեղ բուժիչներ ունեցող պիրոկսիլինը պայթում է դրանցից սուկալի ուժով, սակայն անզգա յե թույլ հարվածների հանդեպ, Նա ավելի ևս անզգա յե խոնավ վիճակում. այդ պատճառով այդ պիրոկսիլինը

մամլում են պրիզմաներով 500-1000 մթն. ճնշման տակ. 1,1-ից 1,3 տես. կշռով, ըստ վորում մնում է նրա մեջ մինչև 12% ջուր: Այդպիսի թաց կտորները կարելի չե սղոցել և ծակել, սակայն շոր պիրոկսիլինը պայթում է ըուծի՛նից խիստ բրիզանտորեն:

Նիտրոթազանթների մեջ ավելի քիչ թթվածին է պարունակվում, քան այդ պահանջվում է լրիվ այրման համար: Մեծ ճնշման տակ հեքսանիտրոմիացութուանների պայթյունն ընթանում է մոտավորապես այս հավասարութամբ.



ավելի թույլ ճնշման դեպքում կազմվում է ավելի շատ CO և H_2O . ինչպես նաև ազոտի ոքսիդներ, մեթան և HCN. ավելի ուժեղ ճնշման դեպքում՝ ավելի շատ CO_2 և H_2 , 13,4% N պարունակող պիրոկսիլինի պայթման ջերմութունը հավասար է մոտավորապես 1050 կալ. (սովորական ճնշման տակ ջուրը լինում է գոլորշու ձևով). գազերի տես. ծավալը՝ $V_0 = 860$ լիտրի, ըստ աշիվների պայթման բարեխառնութունը = մոտ 2800°, 11% N պարունակող կոլլոդիոն բամբակի պայթման ջերմութունը = մոտ 850 կալ. նրա պայթման ջերմաստիճանն ավելի պակաս է, քան թե նիտրոզլիցերինինը, վորովհետև արտադրվող ջերմութունն ավելի քիչ է, իսկ գազի տեսակարար ծավալն ավելի շատ:

Բարձր նիտրացման յենթարկված բամբակը լուծվում է միայն ացետոնի կամ քացախեթերի մեջ (վերջինի մեջ դժվարութամբ), իսկ 12,7% N պարունակող արտադրանքն սպիրտի և չեթերի խառնուրդի սեջ ուռչելով դառնում է դոնդող: Ազոտի պարունակութունը վորոշվում է նիտրոշափով: Կայունութունը փորձելու համար տաքացնում են մինչև 135° և վորոշում այն ժամանակը. վոր է ընթացքում յերևում են կարմիր գոլորշիներ (25—30 բոպե), կամ թե չե ճիշտ կերպով հաշվում են 135°-նում արտադրված ազոտ ոքսիդի քանակութունը մի վայրկյանում: Հիմնական նյութերի ավելացումը չի բարձրացնում լավորակ արտադրանքների կայունութունը. ազատ ազոտային թթվի ներկայութունն արագացնում է ինքնաքայքայումը: Ատորյա պայթուցիկ աշխատանքների համար պիրոկսիլինը քիչ է կիրառվում, վորովհետև այն և՛ թանկ է, և՛ ավելի քիչ պայթման ուժ ունի, քան թե դինամիտը: Նա կիրառվում է՝ 1) ռազմական անձուխ վառող պատրաստելու համար, 2) վորպես ռազմական պայթուցիկ նյութ՝ տոնիկներ, կամուրջներ և ականներ պայթեցնելու համար

(պիկրինաթթվի հետ հավասար), 3) ծովային գործում—տորպեդներին և ստորջրյա ականների համար:

Կոլլոդիոն բամբակ կոչվում են թույլ նիտրացման լենթարկված թաղանթանյութի ացն տեսակները, վորոնք հեշտութիամբ լուծվում են սպիրտի և յեթերի (2:1) խառնուրդի մեջ. դիսսոլորապես այս խմբին և պատկանում մոտ 11% N պարունակող տեսարանիարոմիացուցիչումը, վորն ստացվում է մոտավորապես 15% ջուր պարունակող 20—40° թթվի ոգնութիամբ նիտրացնելով: Կոլլոդիոն բամբակ կազմվում է, չերևի, այսպես կոչված հիդրոթաղանթի հաշվին, վորն իր հերթին ստացվում է թաղանթանյութի մոլեկուլը, նիտրացման համար գործածվող թթվի ոգնութիամբ, մասնակի հիդրատիկ քայքայման լենթարկվելու հետևանքով: Մոլեկուլի չափերը փոքրանալու հետ միասին այդ նյութերի մոլեկուլների լուծելիութունը ացեառնի և, հետագայում, սպիրտի մեջ մեծանում է. վերջինը միշտ էլ ազոտ պարունակելու հետ չի կապված:

Պալթուցիկ ժելատինի, ցելուլոզիդի և արվեստական մետաքսի համար գոլութիուն ունեն կոլլոդիոն բամբակի մի շարք տեսակներ. վերջին նստատակի համար նա պետք է առանձնապես շուտ լուծվող լինի—այդ հաջողվում է 40°-ում նիտրացնելով: Կոլլոդիոն բամբակի բոլոր տեսակները սակայն լուծուցիթների մեջ պետք է ունենան թանձր խտաստիճան: Մոլեկուլների չափերի փոքրացումը պետք է հաջողվի հենց սկզբից:

Բարձր վորակի կոլլոդիոն բամբակ պատրաստելը պահանջում է բավականաչափ փորձ. թաղանթանյութի նախնական մշակումը—ալկալիների հետ լեփելով և սպիտակացնելով—ուժեղ կերպով ազդում է արտադրանքի վորակի վրա: Փայտի թաղանթանյութը յեփելիս, կողմնակի նյութերի մինչև 20% -ը և ավելին անցնում է լուծուցիթի մեջ. խիստ սպիտակացրած բամբակը տալիս է անհամեմատ ավելի հարուստ նիտրոբջջանյութեր (վորոնց մոտ հավանորեն բջջանյութի մոլեկուլի հիդրոլիզն ավելի յե արտահայտված), վորոնք լուծվում են սպիրտի և չեթերի խառնուրդի մեջ. մյուս կողմից՝ կան և չլուծվող տեսարանիարոմիացուցիչումներ: Պալթուցիկ նյութերի անխիկացում կոլլոդիոն բամբակը գործածվում է նիտրոգլիցերինը ժելատինացնելու համար (պալթուցիկ ժելատին, նիտրոգլիցերին վառոդ), և այդ դեպ-

քում նա պետք է հեշտությամբ լուծվի նիտրոզլիցերինի մեջ և հարուստ լինի ազոտով:

Սպիրտի և յեթերի խառնուրդի մեջ լուծած կոլլոզիոն բամբակի լուծույթը կոչվում է կոլլոզի. լուծույթը շոգիացնելիս մնում է թափանցիկ և առանձնական մի թաղանթի կոլլոզին կիրառվում է լուսանկարչության, անդամահատության, լակերի և ֆիլմերի արդյունաբերության մեջ, առևերյան գործվածքները առգորելու և բազմաթիվ այլ նպատակների համար:

ՊԻԿՐԻՆԱԹՅՈՒ

Անուշաբուլը նյութերի շարքին պատկանող բարձր նիտրացման լենթարկված իսկական նիտրոմիացություններն ունեն պայթուցիկ հատկություններ, վորոնցով նման են գլիցերինի և թաղանթանյութի ազոտաթթվական լեթերներին: Կիրառվում են՝ տրինիտրոբենզոլ $C_6H_3(NO_2)_3$, վորի հալ. կետն է 121° , արինիտրոտուոլ $C_6H_2(CH_3)(NO_2)_3$, վորի հալ. կետն է 82° , դինիտրոբենզոլ, դինիտրոթուոլ և այլն. սակայն, նկատի ունենալով նրանց միջի թթվածնի անբավարար քանակությունը, այդ նյութերը պայթեցնում են ուժեղ ճաթիչների ոգնությամբ:

Պայթուցիկ նյութերի այս խմբի ամենաաչքի ընկնող ներկայացուցիչն է պիկրինաթթուն, արինիտրոֆենոլը՝ C_6H_2

2416 1

$(NO_2)_3OH$, վորը հալանի յե արդեն մոտ 150 տարի և գործադրվել է վորպես դեղին ներկ. 1885 թվին միայն Տյուրպենը հալանաբերել է նրա աչքի ընկնող պայթուցիկ հատկությունները (մեկնիտ): Պիկրինաթթուն բյուրեղանում է բացդեղնավուն թերթիկներով, հալ. կետն է 122° . սառը ջրում վատ է լուծվում, իսկ տաք ջրի մեջ՝ բավական լավ. խիտ դառը համ ունի, ստատիկ թանափոր է և ուժեղ թթվի հատկություններ է ցույց տալիս:

ԱՆՎՏԱՆԳ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐ

Քարածխի հանքերում պահանջվում են այնպիսի բանավտանդ պայթուցիկ նյութեր, վորոնք չեն պայթեցնում հանքային դաղը և անխափոշու և ուղի խառնուրդը: Այդպիսի համեմատական անվտանգության հասնում են պայթման ջերմաստիճանի իջեցնելով ($1800-2000^\circ$) և բոցավառման տևողությունը կարճացնելով. այդպիսի ազդեցութուն են թողնում գազերի ավելի

ցածր ճնշումը և բոցի կարճութիւնը. մեծ լիցերը սակայն միշտ ել շատ թե քիչ վտանգավոր են: Ամենավտանգավորը սովորական վառողն է, վորը բոցավառման ժամանակ թեև բարձր ջերմութիւնն չի առաջացնում, սակայն բոցավառումը համեմատաբար յերկար է տևում. այդ իսկ պատճառով նրա կիրառումը քարածխահանքերում արգելված է: Ծիշտ ալդպես ել վտանգավոր են համարվում դինամիտի սովորական տեսակները՝ նրանց բոցավառման բարձր բարեխառնութիւնն և գոյացող գազերի բարձր ճնշման հետևանքով:

Անվտանգ պայթուցիկ նյութերի մեծ մասի գլխավոր բաղադրիչ մասն է հանդիսանում ամոնիում նիտրատը՝ NH_4NO_3 , վորն ուժգին բուժիների ներգործութիւնից ինքն իրեն պայթում է: Նրա քայքայումը տեղի չէ ունենում հետևյալ համասարութեամբ՝ $\text{NH}_4\text{NO}_3 = \text{N}_2 + 2\text{H}_2\text{O} + \text{O}$, ըստ վորում 1 կգ. ից արտադրվում է մոտ 375 կալ. (ջուրը գաղային վիճակում). քայքայման գազերը բաղկացած են գլխավորապես ջրի գոլորշիներից և քիչ քանակութեամբ N_2O_3 -ից. գազերի տեսակարար կշիռն է 980 լ, պայթման ջերմաստիճանն է 1100° . Վառելու և թուլլ հարվածների ազդեցութեան դեպքում ամոնիում նիտրատը խիստ ինդիֆերենտ նյութ է հանդիսանում: Այդ նյութը քիչ քանակութեամբ անվտանգ լին միացութիւնների հետ խառնելիս, — ըստ վորում հաշվի չէ առնվում քայքայման ժամանակ գոյացող թթվածինը, — ստացվում են իրենց ազդեցութեամբ խիստ յեղանդուն խառնուրդներ. շնորհիվ գազերի մեծ ծավալի, նրանք ունեն պայթման ցածր ջերմաստիճան, միտնգամայն անվտանգ են նրանց հետ գործ ունենալիս, սառը վիճակում կայուն են, հեղձուցիչ գազեր չեն առաջացնում, սակայն խիստ հիգրոսկոպիկ (խոնավառու) են. նրանք կարիք են զգում լայլ դարսելու, վորն, ի դեպ, հաճախ պակասեցնում է նրանց անվտանգութիւնը:

Պրուսիայի քարածխահանքերում 1923 թվից սկսած կիրառվում են հետևյալ անվտանգ պայթուցիկ նյութերը, վորոնցից միջանիսը ժելատինացված են.

Կարբոնիտ A	Լիգնոդիտ C	Դամենիտ A
26,5% NH_4NO_3	74% NH_4NO_3	82% NH_4NO_3
30 > ժել. նիտրոգլիցերին	4 > ժել. նիտրոգլիցերին	4 > նիտրոգլիցերին
3 > $\text{Ca}(\text{NO}_3)_2$ -ի	1,5 > դի-և արինիտ-բոթոլուալ	1 > նիտրոնաֆտալին
50% ₇ -նոց լուծույթ		

Կարբոնիտ A	Լիդնոզիտ C	Դամենիտ A
40% NaCl	18% KCl	10,5% KCl
0,5 > փայտի ալյուր	2 > փայտի ալյուր	2,0 > փայտի ալյուր
	0,5 > ածխափոշի	0,5 > ածխափոշի

Սովորաբար տարբերում են՝

ա) ժելատինացված նիարոզլիցերինալին պայթուցիկ նյութեր, զորոնք պարունակում են 25—30% նիարոզլիցերին, բացի այդ—ամոնիում նիարատ և KCl (կամ NaCl)։

բ) կիսապլաստիկ նյութեր՝ 10—12% նիարոզլիցերինի պարունակությամբ։

գ) փոշաձև պայթուցիկ նյութեր, զորոնք պարունակում են ամոնիում նիարատ և միայն 4% նիարոզլիցերին (պայթյուն ուժեղացնելու և ավելի հուսալի դարձնելու համար)։

Ավելացվող KCl (կամ NaCl) իջեցնում է խառնուրդի ալյուման շերմաստիճանը. թթվածնի պարունակությունն այն հաշվով է զերցնվում, զոր պայթման հետևանքով գազային թունաժոր պրոդուկտներ՝ (CO) չստացվեն։

Այս պեռք է հիշել նաև՝ դեաոնիտը, դոպրիտը, կայուզիտը, նոբելիտը, վեստֆալիտը (բուլոն էլ պարունակում են NH_4NO_3 և քիչ քանակությամբ նիարոզլիցերին) և, զերշապես, այսպես կոչված «poudre Favler», զորը տարածված է Ֆրանսիայում։

Նախկին, ճիշտ է, անվանող, սակայն առատորեն CO կազմող «ածխալին կարբոնիտներն» այժմ դործածությունից դուրս են լեկել։

Ռուսի շրջանում 1925 թվին ստացված 1 տ. ածխի համար ծախսվել է 108 գ պայթուցիկ նյութ, զորի արժեքն էր 18 պֆեն., 1926 թվին՝ միայն 84 գ՝ 14 պֆեն. արժեքով, սրա կեսից ավելին գործ է ածվել քարատեսակները պայթեցնելու համար։ Այդ կազմում է քարածխի արժեքի միայն մոտ 1%-ը։ 1926 թվին 1925 թվի նկատմամբ պայթուցիկ նյութերի ծախքի կրճատումը հետևանք է գլխավորապես ածխածնազանց հարատե աճող մեխանիզացիայի։ Մեծ քանակությամբ հանքային գազ պարունակող հանքանոթերում պայթյուններ կատարելը մեծ մասամբ արգելված է։ Հանքային գազի տարածվելուն արգելք է հանդիսանում պայթման հետևանքով բարձրացող լեռնալին տեսակներէի փոշին։

Սովորական սև վառողն իրոք դարեր շարունակ փոփոխութիւն չի յենթարկվել: մեծ հրանոթներէ համար գործադրելիս միայն սկսեցին պատրաստել վառողի ավելի խոշոր հատիկներ և խառնել այն, նկատի ունենալով վառողային լիցի պլումբ դանդաղեցնելու անհրաժեշտութիւնը: հինց այդ ձևով ել մշակվել է մամլած վառողը (սև և գորշ): Սակայն այն հիմնական նյութերը, վորոնցից պատրաստում եյին սովորական վառողը, հնարավորութիւն չեյին տալիս բավարարելու ավելի քան 650—700 կալ. եներգիա ունեցող վառողի պահանջը:

1870-1875 թ.թ. Ֆրանսիայում մի շարք փորձեր կատարվեցին «պիկրատ վառող» պատրաստելու համար. այդպիսի վառող է, որինակ, Բրյուստերի վառողը, վոր 43⁰/₁₀ ամոնիումի պիկրատ և 57⁰/₁₀ KNO₃ է պարունակում և ավելի մեծ եներգիա լեցուցաբերում քան սովորական վառողը: Այնուհետև փորձեր դրվեցին պիկրինաթվի ժելատինանման խառնուրդների և կոլլոիդի հետ (Տյուրպեն), վորոնք հանգեցին Վիելի (1886 թ.) անձուխ վառող հայանաբերելուն: Վիելին հաջողվեց պիրոկսիլինը շառաչող սնդիկի բուծինով այրելիս իջեցնել բրիզանտութիւնն այն բանով, վոր քացախթերով մշակելու հետևանքով պիրոկսիլինն ընդունում էր խիտ «ժելատինացված» վիճակ, վորը չէր հաջողվի պարզ մամլման միջոցով: 1888 թվին հրապարակ յեկան Նաբելի նիտրոպիքերինային վառողի տեսակները, և այդ պահից բոլոր գորաբանակներում նախկին սև վառողը գիջեց իր տեղն անձուխ վառողին:

Հետևակին արված հրացանների համար հիմա գրեթե ամենուրեք գործ է անվում անձուխ վառողը: Դրա համար վերցնում են մոտ. 12,5—13,4⁰/₁₀ N պարունակող պիրոկսիլին, վորն իր բազադրութիւամբ մոտ է պենտանիտրոթադանթին և ժելատինացնում են սպիրտի և լեթերի (1:2) խառնուրդով: Լրիվ ժելատինացում, վոր ստացվում է քացախթերէ կամ ացետոնի ազդեցութիւնից, ավլալ դեպքում ավելորդ է. այնինչ սպիրտի և լեթերի խառնուրդը մասամբ է միայն ժելատինացնում: Սպիրտով թրջած պիրոկսիլինը հատուկ անոթներէ մեջ խառնում են ժելատինացնող հեղուկի հետ, ըստ վորում նա դառնում է թափանցիկ կինամոնազուլն պլաստիկ մի դանգված, վորն այնուհետև գլանելով դարձնում են բարակ թիթեղներ, կամ մամլում են

քառակուսի ձողերով և ապա կտրատւմ բարակ թերթիկների (թերթիկավոր վառող), կամ թե չե հակադարձերով մամլում են լերկար խողովակներով, վոր ապա կտրատւմ են կարճ կամ յերկար կտորների (խողովակաձև վառող): Հետո մեկ անգամ ել յեփում են ջրով, չորացնում են և վերջիվերջո գրաֆիտով թեթև կերպով պատում, վորպեսզի շփումից ելեկարականութիւնն չառաջանա: Ժելատինացնող զանգվածի մի մասը փնում ե վառողի մեջ:

Գերմանական գինվորական հրացանների համար, 1888 թ. ձևի, գործ եր անվում 1,7 մմ² մակերես և 0,25 մմ հաստութիւն ունեցող թերթիկավոր վառող: Այդ պատրաստում եյին՝ ժելատինացնելով 100 մաս շառաչող սնդիկը (12,6—12,8% N), 2 մաս քափուրի, 70 մաս քացախեթերի և 30 մաս սպիրտի հետ. պատրաստի վիճակում նա թեթև կերպով քացախեթեր եր բուրում և լերկար փամանակ պահելիս կորցնում եր իր նախնական եներգիտն: Նոր «Տ վառողը», 1898 թ. ձևի, բաղկացած ե 1 մմ² մակերես ունեցող թերթիկներից. վառողը պատրաստվում ե շառաչող սնդիկից (13,1—13,3% N), վորը ժելատինացված ե լինուր քափուրով և սպիրտեթերի խառնուրդով, ըստ վորում նրա մեջ պարունակվող քափուրը վորոշ չափով իջեցնում ե այլման արագութիւնը: Ստաբիլիզացիայի համար ավելացնում են նաև 1% դիֆենիլամին: Այդ վառողը մամլում են լերկար թելերով, վոր ապա կտրատւմ են թերթիկների ձևով. վերջիններն ունեն 1 մմ² մակերես և խիստ մեծ խտութիւնն. 10 գրամանոց արկին նա հաղորդում ե 875 մ վայրկ. նախնական արագութիւն: (Ավելի մանրամասն տես եջ 1Է): Այդ ձևով պատրաստվում են ռազմական վառողներն Ավստրիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում, Յապոնիայում և ՀԱՄՆ-ում, ինչպես նաև գերմանական դաշտային հրանոթների C/96 վառողը, վորն, ի դեպ, լերկար ու բարակ խողովակների ձև ունի:

Գերմանական դաշտային թնդանոթները կրակում են խողովակների ձևով մամլած անծուխ վառողով (ւճակարոնանման վառող): Բաց թողնվող արկերն են 6,85 կգ ծանրութիւն ունեցող և բրիզանտ բաղադրութեամբ լցված նւնակ կամ նուլնայիսի ծանրութիւն ունեցող շրտայնել, վոր լցված ե լինում 300 դարարելիի գնդակներով, յուրաքանչյուրը 10 գ քաշով և սև վառողով: Ֆրանսիայում հրացանների և թնդանոթների համար գործադրվում ե պիրոկուրիլինյան «վառող B», վորը ժելատինացվում

ե նախ սպիրտեթերով, ապա մեթիլ սպիրտով, կցելով դրան
իզոմեթիլյանը՝ ստաբիլիզացիայի համար. ֆրանսիական «Լեբել»
հրացանը, 8 մլ արամաչափով, կրակում է «Ց» բրոնզե գնդակ,
վորի քաշն է 12,8 գ. Սկզբնական արագությունն է 885 մ:

Նորեկի նիարոգլիցերին վառողը սկզբում բազ-
կացած էր 50% նիարոգլիցերինից և 50% կոլլոդիոն բամբակից. ա-
ռանձնահատուկ պայմաններում (ջրի տակ 50%-նում) այդ նյու-
թերը, վերցրած տվյալ հարաբերությամբ, դառնում էլին միա-
սեռ ժելատինանման զանգված: Այդ վառողի նախատիպը նորեկ-
յան պալթուցիկ ժելատինն էր, վորի բրիդանտությունը, նիարո-
գլիցերինի պարունակությունը պակասեցնելու շնորհիվ, բավա-
կանաչափ իջավ: Բազմամյա գործածությունից, հետո սակայն
պարզվեց, վոր այդպիսի բարձր տոկոս ունեցող նիարոգլիցե-
րին վառողը, շնորհիվ իր ալրման ընթացքում դարգացող
բարձր բարեխառնության, արագ այրում էր հրացանների և
թնդանոթների փողերի անցքերը, ուստի այժմ ամենուրեք սկսել
են կիրառել ավելի «ցածր» նիարոգլիցերին վառողներ, վո-
րոնց մեջ լինում է 30—18% նիարոգլիցերին և 70—80% կոլլո-
դիոն բամբակ: Այդպիսի բամբակ պատրաստելու համար անհրա-
ժեշտ է սակայն դարձյալ մեկ լուծիչ (ացետոն) և, բացի այդ,
կայունությունը բարձրացնելու համար, 1—2% դիֆենիլամի-
նի խառնուրդ: Այդ խառնուրդը կոչվում է «բալլիստիտ» և գործ
է անվում խորանարդների ձևով (խորանարդաձև վառող).
բացի այդ, պրիզմաների և խողովակների ձևով նա կիրառ-
վում է ծանր դաշտային և ծովային հրանոթների համար բազ-
մաթիվ յերկրներում, ինչպես նաև Գերմանիայում:

Բալլիստիտին շատ է նման անգլիական թելաձև կորդիտը,
վոր կիրառվում է ցամաքային զորաբանակում և նավատոր-
մում: Կորդիտը բաղկացած է 18% նիարոգլիցերինից, 77% չլուծ-
վող շառաչող բամբակից և 5% վաղելիներից և ժելատինացված է
ացետոնով: 1889 թ. կորդիտը հայտնաբերել են Աբելն ու
Լյուարը, և սկզբում բաղկացած էր 5% նիարոգլիցերինից,
37% պիրոկուսիլիներից՝ 13,3% N-ի պարունակությամբ, և 5% վա-
ղելիներից, վորոնք նույնպես ժելատինացված էլին ացետոնի ոգ-
նությամբ: Այդ խառնուրդը, պարունակելով չլուծվող շառաչող
բամբակ, այնքան էլ լրիվ ժելատինացված չէ, ինչպես կոլլոդիոն
բամբակի լուծույթ պարունակող խառնուրդները: Նիարոգլիցե-
րինային թանձր վառողները լուծույթից անջատելու համար օգտոք
է մեկ շաբաթ չորացվեն: Սակայն հաջողվել է (Վիլլ) պատրաս-

աել նման վառող բուրբոլին առանց լուծիչի, այն է՝ 4—8⁰/₁₀ ցենտրոլիտով (տես ստորև): Պատերազմի ժամանակ Գերմանիայում նիտրոզլիցերինը փոխարինվել է արինխարոթուլուլով—նուլյանպես առանց լուծիչի:

Վառողի անձուխ տեսակներն այրվում են գրեթե առանց մնացորդի և կազմում են միայն ջրային գոլորշիների փոքրիկ, շուտ անհետացող մի ամպիկ: Բաց ողում վառելիս, նրանք ավելի դանդաղ են այրվում քան սև վառողը. իսկ հրանոթների մեջ, ուր նրանք զանվում են բարձր ճնշման տակ, և շառաչող սնդիկով բոցավառելիս—նրանք այրվում են լրիվ և արագորեն, մանավանդ նիտրոզլիցերինյան վառողները: Այրման արագությունն ուժեղ բուծիչի ոգնությամբ կարելի յե հասցնել բրիզանտության աստիճանին: Այդպիսի վառողի ամենակարևոր հատկությունը նրա հակալական եներգիան է, վորը պայմանավորված է պլոթման մեծ ջերմությամբ—պիրոկսիլինային վառողի 1 կգ արտադրում է 850—950 կալ. նիտրոզլիցերինային վառողի (20—30⁰/₁₀ նիտրոզլիցերին պարունակող) 1 կլ՝ 1150—1200 կալ.: Անձուխ վառողի այդ տեսակների ոգնությամբ կարելի յե լիցերին հազորդել խոշոր կենդանի ույժ, և, հետևապես, ավելի մեծ նախնական արագություն, թռիչքի ավելի լերկար արահկաորիս և թափանցող ավելի մեծ ույժ:

Նրանց վորոշ թերությունն է անհուսալիությունը պահելու զեղքում. մանավանդ հեշտությամբ քայքայվում են պիրոկսիլին—վառողները, որինակ, արողիկական շոգից կամ շոգենավերի արյումի բարձր բարեխառնությունից [Ֆրանսիական «Յենա» (1907) և «Լիբերաե» (1911) շոգենավերի պայթյունը]: Այդ պատճառով պիրոկսիլինը պետք է խնամքով ստաբիլիզացիայի յենթարկվի այնպիսի նյութեր ավելացնելով, ինչպիսիք են՝ CaCO₃-ը, դիֆենիլամինը, ցենարալիար (դիմեթիլ դիֆենիլ միզանյութը) և մի շարք այլ նյութեր, վորոնք կապում են կատալիտիկ կերպով ներգործող ազոտային թթուն: Ամիլյան սպիրարը չունի բավականաչափ պաշտպանող ներգործություն: Վառողը պետք է պահվի սառը շենքերում և միջանի տարուց վոչ ավելի: Նիտրոզլիցերին վառողներն ավելի լավ են պահվում:

Հրացանների դերմանական յերեք սխտեմների վերաբերյալ ստորև բերված ավլաներն սքանչելի պատկերացում են տալիս հրաձգային զենքերի անխնիկալում ունեցած հաջողությունների մասին:


	Մառուզերի հրացան, 1871—84 թ. ձև	պահեստավոր հրացան, 1888 թ. ձև	1598 թ. ձև
	(ու Վառուզ)	(պիրոկուրի Վառուզ)	(պիրոկուրի Վառուզ)
Տրամաշափ	11 մ	7,9 մմ	7,9 մ
Վառուզի քաշը	5 գ	2,63 գ	3,2 գ
Գնդակի քաշը	25 գ	14,7 գ	10 գ
Գննդանի ուլժը՝ L ₀	241 կգ	307 կգ	390 կգ
Նախն. արագուսթ. V ₀	435 մվ	640 մվ	875 մվ
Թուխքի բարձրությունը 700 մ վրա նշանին		3,8 մ	1,85 մ
Ամենաբարձր մոտ. ձնուսմը 1800 մրմ.		3200 մրմ.	3150 մրմ.

Ուղի ուժեղ դիմադրուելթյունը վերացնելու համար կարելի չէր լիարժեք արամաշափը փոքրացնելու, իսկ 1898 թ. ձևի հրացանի գնդակը դարձնել սրածայր. միաժամանակ կարելի չէր լիարժեք գնդակը չերկարացնելու, վորպեսզի նրան կալուենուելթյուն արվի շարժման ընթացքում և բավականաչափ հարվածող ուլժ. հենց կալուենուելթյան համար է, վոր կապարե գնդակը պատած է նիկելազոծ բարակ պողպատե թաղանթով: Գնդակի և վառուզի քաշը բավականին պակասեցված, և, այնպես վոր դիմվորը կարող է իր վրա ավելի մեծ քանակութամբ փամփուռոններ կրել: Հրացանի պահեստարանը անպարտում է 5-ական փամփուռու: 1898 թ. ձևի համար վառուզի ավելի ուժեղ լից է դործածվում, քան թե 1888 թ. ձևի համար; վորի շնորհիվ ավելի թեթև գնդակն ստանում է 90 կգ/մ ավելի հարվածող ուլժ, միաժամանակ վորոշ չափով փոքրացված է այրման արագուելթյունը:

Փողից դուրս գալուց հետո, գնդակի կենդանի ուլժը՝ L₀ արտահայտվում է կիրառված մետրներով, բազմապատկելով գնդակի քաշը՝ P, արագուելթյան՝ V₀ քառակուսիով և բաժանելով արագացման (g=9,808 մ) կրկնապատկի վրա այն է՝ $L_0 = \frac{PV_0^2}{2g}$, վորովհետև 1898 թ. ձևի համար վառուզի այրման ջերմութունը = 3,2 × 0,900 = 2,88 կալ=1224 կգ/մ, ուստի գնդակի հարվածող ուլժը 390 կգ/ր հավասարվելու դեպքում, վառուզի ենթադրյալ ուլժը 320 կգ/ր հավասարվելու դեպքում, վառուզի համար ուղտակար ներդործության դործակիցն ավելի քիչ է: Փողը չերկարացնելու դեպքում ստացվում է ավելի լրիվ այրում և ավելի շատ ուղտակար ներդործութուն:

Հրաձիգ գննքի անխնիկալի հետագա կատարելագործման աշխատանքները շարունակվում են շատ յեռանդուն կերպով: Ի-

դեպի վառողը, դրսևորելով հնարավոր չափով շատ ենթադրիա, պետք է, վորքան կարելի յե, համահավասար ճնշում ներգործի գնդակի հատակի վրա, լերը նա անցնում է հրազենի փողի լերկարությամբ. դրա համար նրա ալրման արագությունը պետք է սկզբում մեծ չլինի, իսկ հետո ծավալվի մեծացման գույքընթաց, ալրումը ևս պետք է համեմատական չափով աճի: Հրազենի փողի ճնշման իդեալական կորը պետք է ունենալ նկ. 9-ի $O A_1 C_1$ կորի տեսքը, վորի d_1 բարձրությունը պատկերացնում է ճնշումը, իսկ լերկարությունը—գնդակի ճանապարհն է հրազենի փողում: Իրականում հրացանների 2/88 և 2/98 սխառեմներում նկատվող ճնշումները կարելի յե մոտավորապես արտահայտել



նկ. 9

$O A B C$ կորով սկզբնական d մաքսիմալ ճնշումը գրեթե 3,2 անգամ ավելի յե d_1 միջին ճնշումից, իսկ հետո նա իջնում է խիստ փոքր $C D$ մեծության: Վառողի գագերի ճնշումը, մինչև փողից գնդակի դուրս գալը, հավասար է ճնշման և անցած ճանապարհի արտադրյալին $= d l$, այն է՝ նկարի մեջ պատկերացվում է $O A B C D O$ և $O A_1 C_1 D O$ մակերեսներին. յեթե լերկու մակերեսները հավասար են իրար, ալդ ժամանակ գնդակը լերկու դեպքումն էլ պարունակում է ենթադրյալի հավասարաչափ պաշար, վորովհետև $d l = \frac{P V_0^2}{2g}$

Յեթե վառողն ունի մասսիվ կտորների, թերթիկների կամ թելերի ձև, ալդ դեպքում վառելիս, այրվող մակերեսն աստիճանաբար փոքրանում է. խողովակաձև վառողի մոտ նա գեթ չի փոքրվում. ընդհակառակը, բազմաթիվ նեղ անցքեր ունեցող մեծ պրիզմաներն այրվելիս այրվող մակերեսը մեծանում է: Մեծ հրանոթների վառողին տալիս են վերջին ձևը, վորի շնորհիվ,

արկը հրանոթի փողով շարժվելիս, եյականապես ջլատվում և ճնշման անկումը, Նիարոզլիցերին վառողի նախնական ճընշումը միշտ ել բարձր և լինում պիրոկլսիլին վառողից, սակայն համապատասխան հատիկավորման միջոցով առաջին տեսակի վառողի այրման ժամանակամիջոցի կարգավորումն ավելի յի հաջողվում: Կոսլիտ հատիկներ ունեցող պիրոկլսիլին վառողը, խողովակի մեջ դնելու դեպքում, շատ հաճախ լրիվ այրման չի լինթարկվում: Նախնական ճնշումը փոքրացնելու համար փոքրացնում են լիցի խտությունը: Վերջապես լեթե ցանկանում են՝ հրանոթի փողաբերանի մոտ բոց չնկատվի, դրա համար անհրաժեշտ և իջեցնել այրման ջերմաստիճանը:

Հոչակավոր հեռաձիգ թնդանոթը, վորի արամագիծն եր 24 սմ և արամաչափը՝ 100 սմ, կրակում եր քրոմ-նիկելի արկեր ճակատի գծից մինչև Փարիզ, վորը դառնվում եր 128 կիլոմետրի վրա: Արկի սկզբնական արագությունն եր 1600 մետր միկ վալրկչանում: Թեքման անկյունն այնպես եր, վոր արկը բարձրանում եր 32 կիլոմետր բարձրությամբ: Կրուպաի 42 սանտիմետրանոց հրասանդը կրակում եր 80 կգ ծանրություն ունեցող արկեր և հեշտությամբ խորտակում եր Լիեթի ամրությունների զրահը: Այդ լերկու հրանոթները գերմանական հրետանական տիսնիկայի ամենաբարձր նվաճումներն են:

ԼՈՒՑԿԻ ՅԵՎ ՖՈՍՖՈՐ

Գրակ. Jettel, Zündwarenfabrication, 1897.

Ավելի քան 100 տարի սրանից առաջ վորպես վառիչ միջոց ծառայում ելին կալձ քարը, պողպատն ու արեթը ծծմբալուցկիների հետ միասին: 1823 թվին Դոբերեյն երը հայտնագործեց ջրածնային հուրհրանը, վորը, դժբախտաբար, առորչա գործածության համար քիչ եր պիտանի: Շփելով՝ այրվող լուցկիների առաջին նմուշների մեջ մտցնում ելին քլորաթթվի աղեր պարունակող վառիչ զանգված, սակայն այդ աղերը չեյին կարող ընդհանուր դործածության մեջ լինել, վորովհետև նրանց բռնկումը պալթման ընուլթ եր կրում: Վորոչ չափով տարածվեցին այն լուցկիները, վորոնք վառվում ելին ծծմբաթթվով թրջած աղբստի մեջ մացընելով և վորոնց գլխիկները պարունակում եյին կալիում քլորատ և շաքար կամ ծծումբ (սոսնձի հետ միասին): 30-ական թվականներից սկսած ֆոսֆորական լուցկիները դուրս քշեցին բոլոր մլուսները, իսկ 1870 թ. նրանց տեղը բռնեցին անվաանգ, ֆոսֆոր չպարունակող, լուցկիները:

Ֆոսֆոր ստացվում է Անգլիայի, Գերմանիայի (Բիտտերֆելդ, Պիտերից) մի քանի գործարաններում և Նիազարայի մոտտարեկան արտադրվում է մի քանի հազար օ: Անցյալում վորպես արտադրութան նյութ ծառայում էր վոսկրամոխիրը, իսկ ներկայումս առավելապես—ավելի եժան հանքային ֆոսֆատները: Այս նյութերը քայքայում են ծծմբաթթվով, դիպը հեռացնում են, իսկ ազատ ֆոսֆորաթթու և քիչ քանակությամբ միակալցիումական ֆոսֆատ պարունակող լուծույթը գոլորշիացնում են մինչև շարապանման վիճակը. ապա խնամքով խառնում են այդ զանգվածը փայտածխի կամ կոկաի փոշու հետ և թորում են դալերային վառարաններում՝ դեղին շիկացման շերտատիճանում, ինչպես այդ անում են ծխող ծծմբաթթու ստանալու դեպքում: Պատրաստելու ձևը, վորն ըստ լերևույթին այժմ դերակշռողն է, լեռակալցիում ֆոսֆատի, ածխի և սիլիկատթթվի լառնուրդից՝ Ռիդմանի յեղանակով՝ Վոլտյան սղեղի միջոցով ֆոսֆորի ելեկտրոթերմիկ թորումն է: Ջրի մեջ հավաքվող հում ֆոսֆորը մաքրվում է հմալապատ (արծնած) յերկաթե ռետորտներից՝ կրկնակի վերաթորումով, ֆիլտրվում է կաշվի միջով և ձևավորվում ձողերի ձևով (վերջին լերկու գործողութունները կատարվում են ջրի տակ): Վաճառքի լե հանվում ձողերի ձևով, վորոնք յերկաթե պատիճների մեջ դողված են լինում ջրի տակ: Հալման կետն է 44°, յեռացման կետը՝ 290°, Կարմիր ամորֆ ֆոսֆորը պատրաստում են դեղնից, վերջինս 350°-նում ավազաբաղնիքի վրա հմալապատ յերկաթե կաթսաներում, առանց ոդի, յերկարատե տաքացման յենթարկելով, վորից հետո լվանում են ծծմբածխածնով և վողողում նատրիումական ալկալիով: Ֆոսֆորը, բացի լուցկու արդյունաբերութունից, ոգտագործվում է մաքուր ֆոսֆորաթթու պատրաստելու համար, առնետին թունավորելու համար և այն: Ֆոսֆորի գոլորշիներն առաջացնում են վտանգավոր նեկրոզ—ատամների և լնդերքի գարշահոտ քայքայում:

Ֆոսֆորական լուցկիներ: Լուցկիները պատրաստելու համար փայտի գերանը փափկացնում են շոգիններով, տաշում են դանի ձևով և հատուկ պտուտակած կտրտող մեքենաների ոգնությամբ դարձնում լուցկու հաստության թերթ. այդ թերթն այնուհետև կտրտում են քառանկունի ձողիկների, Կլոր լուցկիներստացվում են խողովակածև դանակներ ունեցող խարաբուղիչ մեքենաների ոգնությամբ: Փայտի ամենալավ տեսակը բարաին է, վոր մեծ քանակություններով ներմուծվում է ՌՍՀՄ-ից. այդ փայտը հեշտ


և տաշվում և տողորվում: Չորացրած փայտիկները սրամիտ կերպով հնարված հավաքող մեքենաներով դարսվում են ակոսաշատ տախտակիկների վրա ախպես, վոր միայն գլխիկներն են լեզրից դուրս ցցվում, և հաստատապես ամրացվում են շրջանակների մեջ: Ամենից առաջ լուցկու գլխիկներն ընկղմում են հալած ծծմբի կամ, ավելի լավ է, պարաֆինի կամ բնաճարպի մեջ. այդ նյութերի պաշտոնը՝ վառիչ զանգվածի բռնկումը փայտին փոխանցելն է: Ապա թաթախում են վառիչ զանգվածի մեջ: Այս զանգվածը կազմելու համար վերցնում են միայն 4—7⁰/₁₀ ֆոսֆոր, 50⁰/₁₀ և ավելի՝ կապար պերոքսիդ, կամ նրատեղ, — վոր ավելի վատ է, — սալպետր, սոււր, կապար նիտրատ կամ մանդան պերոքսիդ. կալիում քլորատի աղեր, պալթուցիկուլթյան հեռահանքով, չեն դործածվում: Չանգվածը կպցնելու համար սովորաբար ծառայում է 13—15⁰/₁₀ ջրաչին լուծույթում պատրաստած դեկատրինը (30—35⁰/₁₀), ինչպես նաև սոսինձը: Չանգվածը կարելի չէ ներկել կավճով, քրոմի դեղին ներկով, ուլարամարինով և այլն: Վորպեսզի կանխվի ֆոսֆորի զանդաղ օքսիդացումը և վորպեսզի լուցկիները հոս չաբձակեն, նրա լավ տեսակների գլխիկները պատում են լակի բարակ շերտով: Փայտը նախապես ամոնիում սուլֆատով կամ ամոնիում ֆոսֆատով տողորելով՝ նրան հաղորդում են բոցով վառվելու հատկություն, ըստ վորում այդված մասերը լուցկուց չեն պոկվում:

Անվտանգ լուցկիներ. Դեղին ֆոսֆորի թունավորությունը դեռևս 50-ական թվականներին դրդել է Շրյոտտեիին, կարմիր ֆոսֆոր հայտնաբերողին, կիրառել վերջինս լուցկիներ պատրաստելու համար. սակայն 60-ական թվականների վերջերում միայն «անվտանգ» կամ «չվեղական» լուցկիները Շվեդիայից տարածվեցին ամբողջ աշխարհում: Այդ լուցկի ֆոսֆոր բնավ չի պարունակում. գլխիկի վառիչ զանգվածը բաղկացած է կալիում քլորատից, ծծմբից կամ անտիմոն սուլֆիդից (կալիում-բիքրոմատից, մանգանպիրոքսիդից), բուսական խեփի կամ դեկատրինի լուծույթից և անտարբեր խառնուրդներից, ինչպես ապակու փոշին, ումբրահողը, carut mortuum-ը և այլ խառնուրդներն են. բացի այդ, փայտը տողորվում է պարաֆինով, ինչպես նաև ամոնիում ֆոսֆատով: Վորպեսզի այդ զանգվածը բոցավառվի, այն պետք է քսել մի առանձին մակերևութի, վոր պատած է լինում կարմիր ֆոսֆորի, անտիմոն սուլֆիդի և դեկատրինի լուծույթի խառնուրդով: Շփումից առաջացած ջերմությունից կար-

մի ֆոսֆորի մի մասը փոխվում է զեղին ֆոսֆորի, և լուցկին բոցավառվում է:


Գերմանիայում կա լուցկու 71 գործարան, վորոնցից 1925 թվին աշխատում էր 52-ը. դրանք միացված են «Գերմանական լուցկիների Ակց. Ընկ.» մեջ և գտնվում են պետութայն հսկողութայն տակ: 1925 թվին մտնվել է 113285 միլ. հատ, այն է՝ ազգաբնակչութայն լուրաքանչյուր շնչին որական 5 հատ: Գերմանիան ներմուծել է 24 միլ. և արտահանել է 3600 միլ. հատ: Լուցկու մաքսի տարեկան գումարը կազմում է մոտ. 10 միլ. գերմ. մարկ: Լուցկու խոշոր արդյունաբերություն գոյություն ունի Անգլիայում, ՀԱՄՆ-ում, Ֆրանսիայում (մենավաճառություն), Շվեդիայում, Իտալիայում և Ճապոնիայում: Շվեդիան արտադրում է տարեկան 5 միլիարդ տուփ 40 միլ. մարկ գումարի:

Վերջին տասնամյակում լուցկու դեմ հաջող պայքարում է վառիչը: Վորոշ հրակիր մետաղներ, այնպի ճիշտ՝ համաձուլվածքներ (որ. առեբրյան ցերիումը լերկաթի հետ) շփելիս հեշտությամբ կալծեր են տալիս և գործ են ածվում գրպանի վառիչներում: 1920 թվին Գերմանիայում պատրաստվել է դրանցից 10,3 միլ. հատ: Առեբրյան մետաղը պատրաստվում է մի առանձին ցերիտալին համաձուլվածքից՝ 45—50% Ce 20—30% լերկաթի հետ: Դրանով ոգտագործվում են մեծ քանակությամբ ցերիտալին աղեր, վորոնք տարաշեկ (капильное) լուսավորության համար առեբրյան փեղույր պատրաստելիս մնում են վորպես անպետք բան:



ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐ	3
Շառաչող սնդիկ	11
Սովորական (սև) վառող	18
Նխորդդիցեբըն	20
Գինամբու	24
Գլխակալին (բամբակի վառող)	27
Գլխակալին	34
Անվանող պայթուցիկ նյութեր	34
Անծուխ վառող	37
Նուրբ և փոքր	43



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002257

ԳԻՆԸ 75 ԿՈՊԵԿ

A ^{II}
24091

144.



Н. ОСТ

ХИМИЧЕСКАЯ ТЕХНОЛОГИЯ

Взрывчатые вещества

Гиз ССР Армении, Еревань, 1995